չորացած ծաղիկ մը a withered flower.

կոտրած գրիչ մը a broken pen.

մեռած մարդ մը a dead man.

աղէկ կահաւարութեամբ տուներ well furnished houses.

Note. The *past part.* terminating in *ու* (retained from the Ancient Armenian) is occasionally employed in the same sense, as:

օրհնու Փրկիչ blessed Saviour.

ուսու աիկին մը a learned lady.

ծաղկու քաղաք մը a flourishing city.

անցու տարի last year.

4. The *past part.* in *ած* renders also a *relative phrase* (see less. 30, R. 1, Note).

Note. It is also employed *substantively*, and as such, follows the first declension, as:

տեսածս what I have seen, տեսածիս of what I have seen etc.

The Future Participle.

1. It is derived from all verbs by adding *ու*- or *ու*- to the root.

2. It is used as an adjective, as:

խուսափելու վտանգը, The danger to be avoided.

կարդու գիրք մը, A book to be read.

Ուտելու հաց եւ խմելու ջուր. Bread to eat and water to drink.

3. See less. 24, R. 4. Ex.:

Զի մը գնելու եմ, I have to buy a horse.

Տունը կենու եմ, I am to stay at home.

4. It assumes the nature of a substantive by changing its termination *ու*- or *ու*- into *ի*+ or *ի*+, as:

Ըսելի մը ունի՞ք, Have you *anything* to say?

Կարդուի մը չունիմ, I have *nothing* to read.

«Ղոյն ժամուն ձեր խօսելիք (or ինչ որ պիտի խօսիք) պիտի արուի ձեզ.»

„It shall be given you in that same hour *what ye shall speak.*“

Words.

Ջգ fog.	շոգի vapour.	քաջալերիչ encouraging.
երկիր, գետին earth.		ցրուել to disperse.
ոտանաւոր, քերթուած poem.	կազմել to form; կազմուիլ to be formed.	
փախստական fugitive.		ամպ cloud.
տապեա knight.		չքօսեցուցիչ amusing.
միջադէպ incident.		ուսումնարան college.

Exercise 76.

Ծագող արեգակը կը ցրուէ մէզը: Ամպերը գետնէն բարձրացող (arising) շոգիներէ կը կազմուին: Գեղեցիկ ոտանաւորներ պարունակող (containing) գիրք մը տեսած եմ: Մարը մտնող (setting) արեւը կը ցուցնէր (indicated) թէ անօգուտ պիտի ըլլար (it would be) փախստականները հալածելը (pursuing): Երկիրը արգասաւորող (fructifying) անձրեւ (rain) մըն էր: Մտիկ ըրի (I listened) անոր քաջալերիչ խօսքերուն: Չքօսեցուցիչ (pron. ըզ...) վէպ մը կը կարդամ: Կեռաս ծախող (selling) կին մը կը տեսնեմ: Այս նոր քերականութեան տպագրիչն ու հրատարակիչը Պ. Յուլիոս Կրօս (Julius Groos) է: Ուսուցիչը գոհ է ուսումնարանի ուսանողներէն: Գրիչը սուրէն աւելի հզօր (mighty) է: Մեր Փրկիչը Յորդանանի (Jordan) մէջ մկրտուեցաւ Յովհաննէս Մկրտիչէն: Ասպետը՝ վհատած եւ լքեալ (discouraged and dejected) վերագարձաւ: Ամենէն աւելի (the most) յարգուած մարդը միշտ ամենալու մարդը չէ: Յաճախ ամենաուսեալ մարդիկ (people) ամենագէշ գիր (hand) կ'ունենան (write): Ամեն մարդու կեանքը միշտ շարունակուող շարայարեալ (continued) շղթայ մըն է: Ութսուն տարեկան հասակին մէջ (at the age of...) մեռաւ ծերունին՝ սիրուած եւ մեծարուած ամեն մարդէ: Լուծուելու խնդիրը (the problem to be solved) հաղորդուեցաւ (was communicated) բոլոր ուսանողներուն: «Ես կերակուր (meat) ունիմ ուտելու (to eat): Ես ընելիքս գիտեմ (what

to do): “**Հովը դիտողը** (he that observeth) **չկրնար ցանել** (sow), **եւ ամպերուն նայողը** (. . . regardeth) **չկրնար հնձել** (reap):,,

Forty-Third Lesson.

Some derivative verbs.

A. A certain number of *active verbs* in **ել** are formed into *neuter* by changing their termination into **իլ**. Ex.:

Չապանակը կը շարժէ (active **շարժել**) **մեքենան**.

The spring moves the machine.

Լուսինը կը շարժի (neuter **շարժել**) **երկրի շուրջը**.

The moon moves round the earth.

Such are: **այրել**, — **իլ** to burn, **հալել**, — **իլ** to melt, **կոտրել**, — **իլ** to break, **մարել** to put out (the light), **մարել** to go out, etc.

Note. These are not numerous, and follow the 2^d conjugation.

B. *Neuter verbs* are generally formed into *active* by adding to the root **ցնել** or **եցնել**, as:

ուպատել to wait, **ուպացնել** to cause to wait.

մեռնել to die, **մեռցնել** to kill.

ապրիլ to live, **ապրեցնել** to maintain.

քնանալ to sleep, **քնացնել** to lull asleep, etc.

Note. A few neuter verbs which do not undergo this rule, are supplied by other active verbs, as: **մնալ** to stay, **թողալ** to leave; **երթալ** to go, **իրկել** to send; **տեսնել** to see, **ցուցնել** to show; **ելլել** to rise, **հանել** or **վերցնել** to raise, to lift, etc.

C. 1. *Causative verbs* of the 1st and 2^d conjugations are derived from *active verbs* by adding **ցնել** or **եցնել**, and give the sense of employing another as the *agent* of the action indicated by the verb, as:

սիրել to love, **սիրցնել** to cause to love.

խօսիլ to speak, **խօսեցնել** to cause to speak.

2. The *causative* of verbs of the 3^d conjugation is formed by changing the termination of the Perf. **ի**, **ցայ**, or **այ** into **ցնել**, as:

խնդալ to laugh, Perf. **խնդացի**, Caus. **խնդացնել** to make to laugh; **կարդալ** to read, Perf. **կարդացի**, Caus. **կար-**

դացնել to cause to read, to instruct in reading; մոռանալ to forget, Perf. մոռացայ, Caus. մոռացնել to cause to forget; ուտել to eat, Perf. կերայ, Caus. կերցնել to cause to eat, to feed.

3. Those verbs which do not form *causatives*, supply their place by the various forms of *բառ* to give, here in the sense of to cause, to make, to have, to let, with their own Infinitive. Ex.:

Մէքենան գործել տուի, I set the machine at work.
Ցուն մը կառուցանել պիտի տամ, I shall have a house built.

Վերարկու մը շինել տուիք, You have a coat made.
Ձեռ բանար դնել պիտի տար, He would have me put in prison.

Ձեզ գիտցնել պիտի տամ, I shall let you know (send you word).

Ձոյք մը գուլպայ հիւսել պիտի տամ, I shall have a pair of stockings knit.

Conjugation of active and causative verbs in ցնել.

Pres. կը մեռցնեմ I kill, կը մեռցնես, կը մեռցնէ. կը մեռցընենք, կը մեռցնէք, կը մեռցնեն.

Imperf. կը մեռցնէի, կը մեռցնէիր, կը մեռցնէր etc.

Perf. մեռցուցի, մեռցուցիր, մեռցուց. մեռցուցինք, մեռցուցիք, մեռցուցին.

Fut. պիտի մեռցնեմ etc.

Cond. պիտի մեռցնէի etc.

Imper. թող մեռցնեմ, մեռցուր, թող մեռցնէ.

n մեռցնենք, մեռցուցէք, թող մեռցնեն.

Participles.

Pres. մեռցնող.

Past մեռցուցած.

Fut. մեռցնելու.

D. There is a class of verbs compounded of a noun and a verb, which though written separately, constitute only a kind of compound verb, as:

խնամ տանիլ to take care of,

սիք թափել to make efforts,

զանց ընել to omit, to neglect,

դուն գործել to strive etc.

<i>Infinitive.</i>	<i>Perf. Ind.</i>	<i>Imper.</i>	<i>Pres. Part.</i>	<i>Past Part.</i>
ሁሠንኒኒ to call	ሁሠንኒኒኛ	ሁሠንኒኒ	ሁሠንኒኒ	ሁሠንኒኒ
ሀረጎኒኒ to blacken	ሀረጎኒኒኛ	ሀረጎኒኒ	ሀረጎኒኒ	ሀረጎኒኒ
ሀንቀኒኒ to laugh	ሀንቀኒኒኛ	ሀንቀኒኒ	ሀንቀኒኒ	ሀንቀኒኒ
ሰረዳኒኒ to deny	ሰረዳኒኒኛ	ሰረዳኒኒ	ሰረዳኒኒ	ሰረዳኒኒ
ሀሳብኒኒ to live	ሀሳብኒኒኛ	ሀሳብኒኒ	ሀሳብኒኒ	ሀሳብኒኒ
ሀሳብኒኒ to confess	ሀሳብኒኒኛ	ሀሳብኒኒ	ሀሳብኒኒ	ሀሳብኒኒ
ሀሳብኒኒ to pass	ሀሳብኒኒኛ	ሀሳብኒኒ	ሀሳብኒኒ	ሀሳብኒኒ
ሀሳብኒኒ to die	ሀሳብኒኒኛ	ሀሳብኒኒ	ሀሳብኒኒ	ሀሳብኒኒ
ፀሰኒኒ to fly	ፀሰኒኒኛ	ፀሰኒኒ	ፀሰኒኒ	ፀሰኒኒ
ፀሰኒኒ to repose	ፀሰኒኒኛ	ፀሰኒኒ	ፀሰኒኒ	ፀሰኒኒ
ጻፀኒኒ to be written	ጻፀኒኒኛ	ጻፀኒኒ	ጻፀኒኒ	ጻፀኒኒ
ጻፀኒኒ to be lost	ጻፀኒኒኛ	ጻፀኒኒ	ጻፀኒኒ	ጻፀኒኒ

Forty-Fourth Lesson.

Apposition (բացայայտել):

A noun or pronoun used to explain another noun or pronoun is put by *apposition*, as in English, in the same case. Ex.:

Միլտոն՝ անկլիացի բանաստեղծը՝ գրեց Դրախտ կորուսեալը.
Milton, the English poet, wrote Paradise Lost.

Note. The *appositive*, when followed by the *principal term* (բացայայտեալ), remains undeclined, as:

Նեղոս (Nile) գետը, նեղոս գետին, նեղոս գետէն etc.

The noun in *apposition* may be placed either *before* or *after* the noun with which it is in *apposition*, as:

Սոկրատ՝ Յոյն իսապատեղը or Յոյն իսապատեղը՝ Սոկրատ.
Socrates, the Greek philosopher.

Note. Nouns or adjectives as *appositive modifiers* when preceded by the *principal term*, take the definite article ՚, as:

Գետն ՚ Դանուբ, the river Danube.

Մարդասէրն ՚ Հովարտ, Howard, the philanthropist.

Մարգարէն ՚ Եսայի, Isaiah the Prophet.

Մեծն ՚ Տիգրան or Տիգրան Մեծ, Tigranes the Great.

Շնորհալին ՚ Ներսէս or Ներսէս Շնորհալի, Nerses the Graceful.

Nouns in *apposition*, especially when modified by other words, are distinguished from the other parts of the sentence by the բռնի ('), as:

Յովսէփ՝ Յակոբի սիրական որդին՝ Իսմայէլացիներուն վաճառուեցաւ.

Joseph, Jacob's favourite son, was sold to the Ishmaelites.

Note. The two nouns are not separated by the բռնի if both words have become so closely connected as to form really one noun, as:

Պօղոս առաքեալ or Առաքեալն Պօղոս, Paul the Apostle.

Գրիգոր Լուսաւորիչ or Լուսաւորիչն Գրիգոր, Gregory the Illuminator.

Պետրոս Քչնաւոր or Քչնաւորն Պետրոս, Peter the Hermit.

Vocative (հօւփան).

The *vocative* is the same in form as the nominative.

Vocatives accent their *last* syllable, as:

Ղազարոս, դուրս եկ՛ուր, Lazarus, come forth.

Թուղա՛, համբուրելո՞ւմ կը ժամենս, Judas, betrayest thou with a kiss?

Բժիշկ, քու անձդ բժշկէ՛, Physician, heal thyself.

But when a noun in the *vocative* is repeated, or preceded by an *adjective* or by the *interjection* ո՛վ or ո՛ O; the accent is thrown back on the *last* syllable of the first noun, or on the adjective or interjection, as:

Եւ Տէրը ըսաւ, Սիմոն, Սիմոն, And the Lord said, Simon, Simon.

Բարի վարդապետ, Good Master.

Ողորձէ՛ ինձ, ո՛վ Աստուած, Have mercy upon me, O God.

Vocatives are distinguished from the other parts of the sentence by the comma (*ստորակէտ*) (*,*), as:

Եթէ ուզես, Տէր, կրնաս զիս սրբել.

Lord, if thou wilt, thou canst make me clean.

Հայր, քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս.

Father, into thy hands I commend my spirit.

Remarks on Armenian Construction.

In *simple* sentences, the *subject* comes first, secondly the *object*, and thirdly the *verb*, as:

Աստուած սէր է, God is Love.

Ֆուլթոն շրգենաւը հնարեց, Fulton invented the steamboat.

Note. A noun or pronoun in the accusative, governed by an active verb, may be placed either *before* or *after* the verb, but more usually precedes it, as:

Հայրս յի մը գնեց or հայրս գնեց յի մը.

My father bought a horse.

Աստուած շիշ կը սիրէ or Աստուած կը սիրէ շիշ.

God loves us.

Usually, in *complex* sentences, the circumstances of *time* and *place* are first introduced; then comes the *subject*; then the *object*; then the *verb*, and last of all the circumstances of *manner* or *instrument*, as:

Քրիստոսի Ե. դարուն Ս. Մեսրոպ Հայ տառերը կերպար-
ձեւեց.

In the fifth century of Christ, St. Mesrob formed the Armenian letters.

Դատաստանի օրը մեր մարմինները պիտի յառնեն դարձեալ.
Our bodies will rise again in the day of judgment.

Note. This *normal order*, however, may be frequently *inverted* by removing one of the parts of speech from its usual place to the beginning of the sentence, and *vice versa*.

The remaining rules of construction being essentially the same as in English, need no further remark.

Appendix (Յաւելուած).

I. Selection of useful words.

1. Տիեզերք. *The universe.*

Աստուած God.	կղզի island.
Արարիչը the Creator.	լեռ mountain.
արարածը the creature.	բլուր hill.
երկինք heaven, sky.	ձոր, հովիտ valley, dale.
երկնական մար sky.	դաշտ field, plain.
աշխարհ world.	անտառ forest.
արեւ, արեգակ sun.	պուրակ grove.
աստղ star.	ճամբայ, պողոտայ way, road.
մոլորակ planet.	աւաղ sand.
լուսին moon.	մետաղ metal.
վարսամ, գիսաւոր comet.	ոսկի gold.
կրակ, հուր fire.	արծաթ silver.
օդ air.	պղինձ copper.
երկիր earth.	երկաթ iron.
ջուր water.	պողպատ steel.
ովկիանոս ocean.	կապար lead.
ծով sea.	թիթեղ tin.
գետ river.	ածուխ, հանք —, coal.
վտակ brook.	փոշի dust.
ժայռ, ապառաժ rock.	հանք mine.

2. Տանկեր. *Plants.*

արտ corn-field.	հաճար rye.
արմուկը corn.	ցորեն wheat.
դարի barley.	ծաղիկ flower.
վարսակ oats.	ընդակաղամբ canliflower.
ալիւր flour.	շողդամ turnip.
բրինձ rice.	ստեպղին carrot.

եղիպտացորեն Indian corn.	կոստիլ potato.
հմուլ hops.	բողկ radish.
կանեփ hemp.	հաղար lettuce.
քթան flax.	աղցան salad.
ծխախոտ tobacco.	վարունգ cucumber.
ծխել to smoke.	դդումս pumpkin.
բանջար, — եղէն vegetables.	ասի onion.
ծնեբեկ asparagus.	աղապքեղ parsley.
շումին spinach.	կոսիմ cress.
կաղամբ cabbage.	առուցյա clover, խոտ grass.

3. Ծառեր եւ դրոշմեր. *Trees and fruits.*

ծառ tree.	մայրի pine.
թուփ shrub.	եղեւին fir-tree.
արմատ root.	ցարասի birch.
բուն or իրան (ծառի) trunk.	կաղամախ poplar.
ճիւղ branch.	թմբի lime-tree.
ոտ twig.	ուռենի willow.
տերեւ leaf.	խնձորենի ¹ apple-tree.
փայտ wood.	կեռասենի cherry-tree.
կաղնի or խոզ — oak.	ընկայղ walnut.
խոզկաղնի acorn.	ընկուզենի walnut-tree.
փեկոն or աժրի beech.	շաղանակենի chestnut-tree.
թղենի fig-tree.	խաղարջ currant.
թուզ fig.	փուշ հաղարջ gooseberry.
ասլորենի plum-tree.	ժոխենի raspberry-shrub.
որթ or — առուենի vine.	ելակ strawberry.
խաղող grape.	դեղձենի peach-tree.

4. Չբարաններ. *Quadrupeds.*

կենդանի, անասուն animal.	սկիւռ squirrel.
ընտանի domestic.	կատու cat.
ձի horse.	հորթ calf.
զամբիկ, ճայիկ mare.	շուն dog.
մորուկ filly, colt.	կուզբ beaver.
եղ ox.	մորթ skin.
ցուլ bull.	կաշի leather.

¹ The names of trees and bushes are derived by suffixing ր or ւնի to the word indicating their fruit, as:

ծիրան apricot, ծիրանի apricot-tree; տանձենի pear-tree.

կով cow.	աւանակ, էշ donkey, ass.
եղջիւր horse.	այծ goat.
կինձ, վարազ wild-boar.	ոչխար sheep.
եղնիկ stag.	խոյ ram.
եղջերու deer.	գառնուկ lamb.
նապաստակ hare.	բուրդ wool.
ճագար rabbit.	խոզ pig.
խլուրդ mole.	աղուէս fox.
մուկ mouse.	գայլ wolf.
բոբոլ, առնէտ rat.	արջ bear.
բորենի hyena.	կապիկ ape, monkey.
փիղ elephant.	առիւծ lion.
ուղտ camel.	լնձառիւծ leopard.
յովազ panther.	վագր tiger.

5. Թռչուններ. *Birds.*

թեւ wing.	կայտառիկ hedge-sparrow.
փետուր feather.	խայտիտ finch.
կտուց beak, bill.	եկրանիկ gold-finch.
բոյն nest.	դեղձանիկ canary-bird.
հաւկիթ, ձու egg.	կարմրալանջ robin-redbreast.
հաւ hen.	մեղրածուծ (or կողպորի) humming-bird.
աքաղաղ, աքլոր cock.	ճնճղուկ sparrow.
բադ duck.	ծիծեռնակ swallow.
սառ goose.	կկու cuckoo.
հաւքակ poultry-yard.	անծեղ jay. կաշաղակ magpie.
աղաւնի pigeon.	կուռաբ raven.
կարապ swan.	բու owl.
երգեցիկ թռչուն singing-bird.	սիրամարգ peacock.
լորամարգի quail.	փասեան pheasant.
արտոյտ lark.	կաքաւ partridge.
տորգիկ thrush.	աքար snipe.
տխակ, բուլբուլ nightingale.	արագիլ stork.
անգղ vulture.	թութակ parrot.
արծիւ eagle.	բաղէ falcon.
կոցար wood-cock.	Զայլամ՝ ostrich.

6. Զուլեր, սողուններ, իջւորներ. *Fishes, reptiles and insects.*

կէտ whale.	տառեխ herring.
թեփ scale.	լոստի salmon.

շանաձուկ shark.
 ձուկչիբր stock-fish.
 ծածան carp.
 գայլաձուկ pike.
 աղիկեր sardine.
 ուռկան net.
 կարթ fishing-hook.
 ձուկ որսալ to fish.
 ձկնորս fisherman.
 ձկնորսութիւն fishing.
 խեչեփառ crab.
 ոստրէ oyster.
 կարթաձուկ cray-fish.
 կրիայ (ցամաքի) tortoise.
 կրիայ (ծովու) turtle.
 մողէս lizard.
 օձ serpent. իժ snake.
 որդ worm.
 շերամ silk-worm.

կարմրախայտ trout.
 օձաձուկ eel.
 մետաքս silk.
 մրջիւն ant.
 սարդ spider.
 սոսայն (սարդի) web.
 ճպուռ chafer.
 թրթուր caterpillar.
 թիթեռնիկ butterfly.
 դօդօշ toad.
 դորս frog.
 ազրուկ leech.
 մեղու bee.
 մեղր honey.
 մեղրամոմ wax.
 փեթակ hive.
 պիծակ wasp.
 մարախ grasshopper.
 իշամեղու hornet.

7. Մարդ. Man.

Տոգի soul.
 միտք mind, spirit.
 մարմին body.
 միս (մարմին) flesh.
 մորթ skin.
 արիւն blood.
 երակ vein.
 գլուխ head.
 կոպ eyelid.
 թարթիչ eyelashes.
 չքիթ nose.
 հստոտեղիք smell.
 այս cheek.
 ականջ ear.
 բերան mouth.
 ակոսայ, ասամն tooth.
 լեզու tongue.
 ծնօս chin.
 ձորուք beard.
 կոկորդ throat.

մաղ, հեր hair.
 ճակատ forehead.
 դիմագիծ features.
 դէմք, երես face.
 զգայարան sense.
 աչք eye.
 գործարան organ.
 յօնք eyebrows.
 աջ ձեռք right hand.
 ձախ ձեռք left hand.
 մատ finger.
 եղունգ nail.
 զիստ thigh.
 բթամատ thumb.
 ծունկ knee.
 սրունգ leg.
 բուժք calf of the leg.
 սոքք foot. ոտքի մատ toe.
 կրուկ heel.
 ոսկր or ոսկոր bone.

վիզ, պարանոց, ճիւղ neck.	ջիղ nerve.
ուս shoulder.	մկանուկը muscle.
կռնակ back.	ստամոքս stomach.
կուրծք breast. լանջ chest.	թոք lungs.
փոր belly.	լեարդ liver.
բազուկ arm.	երիկամուկը kidney.
ձեռք hand.	սիրտ heart.

8. Հ-ի-ւ-ւ-ր. *Clothing.*

զգեստ garment.	Թեզանիք sleeve.
գերձակ tailor.	օձիք collar.
կերպաս, կտոււ cloth.	կոճակ button. կոճկել to
կրկնոց cloak, mantle.	button.
վերարկու over-coat.	օղակ button-hole.
Թիկնոց frock-coat.	աստառ lining.
բաճկոնակ waistcoat.	դրպան pocket.
փողկապ neck-tie.	ցփաի shawl.
վարակք drawers.	չըջազգեստ gown, dress.
անդրազարակք trowsers..	վտաւակ petticoat.
շապիկ shirt.	սեղմիրան stays.
Դերձակուհի dress-maker.	գողնոց apron.
Թաշկինակ pocket-handker-	ժայաւէն ribbon.
chief.	գօտի girdle.
գուլպայ stocking.	ապարանջան bracelet.
բուրդ wool.	զարդասեղ brooch.
բամբակ cotton.	մանեակ necklace.
կար, կարուած stitch.	դինտ, օղ ear-ring.
ծիրակապ garters.	զարդասեղ (մազե) hair pin.
կօշիկ shoe.	մատանի ring.
հողաթափ slippers.	խոզուկք, գանգուր curl.
փեղդր, գլխարկ hat.	խոզանակ, վրձին brush.
ձեռնոց, Թաթպան glove.	խոզանակել, վրձինել to brush.
ժամացոյց watch.	սանտր, — բել, comb, to —
պատի ժամացոյց clock.	օժոնպլ pomatum.
ժամացոյցի շղթայ watch-	ատամնափոշի tooth-powder.
chain.	ատամնավրձին tooth-brush.
հովանոց umbrella.	օճառ soap.
հովանացակ parasol.	ձեռք լուսլու կոնք wash-
դղակ cap.	hand-basin.

9. Ընտանիք. *The family.*

նախնիք	ancestors.	աներձագ, տագր	brother-in-law.
ծնողք	parents.	քեներ, տալ	sister-in-law.
ձեծ հայր, հաւ, պապ	grandfather.	հայր	father.
ձեծ մայր, հանի, մամ	grandmother.	մայր	mother.
էրիկ	husband.	հօր՝ մօրեղբայր	uncle.
կինկ, կին	wife.	հօր՝ մօրաքոյր	aunt.
աներ, կեսրայր	father-in-law.	եղբորորդի, քեռորդի	nephew.
ղըքանչ, կեսուր	mother-in-law.	եղբորաղջիկ, քեռաղջիկ	niece.
մանուկ, աղայ	child.	հօր՝ մօրեղբորորդի	} cousin.
որդի	son.	հօրա՝ մօրաքեռաղջիկ	
դուստր	daughter.	մանչ	boy.
թոռ	grand-son.	աղջիկ	girl.
(աղջիկ) թոռ	grand-daughter.	(նոր) փեսայ	bridegroom.
փեսայ	son-in-law.	(նոր) հարս	bride.
հարս	daughter-in-law.	հարսանիք	wedding.
եղբայր	brother.	ամուսնութիւն	marriage.
քոյր	sister.	այրի մարդ	widower.
		այրի կին	widow.
		որք	orphan.
		ազգական	relative.
		բարեկամ	friend.

10. Բնակարան. *Dwelling.*

շէնք	building.	ննջասենեակ	bed-room.
պալատ	palace.	սրահ	drawing-room.
տուն	house.	դուռ	door.
տանիք	roof.	փականք, կղզանք	lock.
ձեղնայարկ	loft, garret.	բանալի	key.
սանդուխ	stairs.	պատուհան	window.
գետնայարկ	ground-floor.	տախտակամած	floor.
առաջին դասիկոն	or յարկ	ձեղուն	ceiling.
first-floor.		պատ, սրճ	wall.
երկրորդ դասիկոն	or յարկ	զանգակ	bell.
second-floor.		տապաստակ	mattress.
սենեակ	room.	բարձ	pillow.
վարագոյր	curtain.	սաւան	sheet.
պատկեր, նկար	picture.	վերմակ	blanket.
կենդանագիր	portrait.	օրօրոց	cradle.

Հայելի looking-glass.	յարդանկողին straw-bed.
կահարասիք furniture.	ցայգասեղան night-table.
Տեշտագարան chest of drawers.	ճրագ candle.
գլորոց drawer	վառել to light.
սեղան table.	աշտանակ candlestick.
աթոռ chair.	մոմ wax-candle.
բազկաթոռ arm-chair.	բազմակալ snuffers.
բազմոց sofa.	լուցիկ match.
կապերա carpet.	կանթեղ lamp.
անկողին bed.	Ջերմոց stove.

11. ԽՈՒՆԻՆԵՂ. *The kitchen.*

մսռան pantry.	սափոր pitcher.
խոհարար cook.	դոլլ pail.
բուրակ hearth.	շերեփ ladle.
կրակարան fire-place.	աման dish.
ձխնելոյզ chimney.	պնակ plate.
կրակ fire. ծուխ, մուխ smoke.	դաշխուրան soup-tureen.
ածուխ coal. փայտ wood.	սղցանձաձ salad-dish.
մոխիր ashes.	դգալ spoon.
կայծառ, ունելի tongs.	պատառաքաղ fork.
տապակ pan.	դանակ knife.
տապիկել to fry.	անձեռոց napkin.
սեղանի սփռոց table-cloth.	խից cork.
աղձաձ salt-cellar.	խցան cork-screw.
պղպեղձաձ pepper-box.	բաժակ glass.
մանանեխ mustard.	գաւաթ cup.
մանանխաման mustard-pot.	շաքարձաձ sugar-basin.
քացախ vinegar.	սրճաշունիձ coffee-pot.
ձէթ oil.	սոսստակ tea-kettle.
շիշ bottle.	թէյաման tea-pot.
սրուակ water-bottle.	սկահակալ saucer.

12. ՈՒՐԵՒԻ Է ԽԻՒԻՒ. *Food and drink.*

կերակուր victuals, meat.	թուրձ chops.
մսուճք, ուտելիք food.	եգնեխի beef.
անօթութիւն hunger.	հորթեխի veal.
անօթի hungry.	խոզնի pork.
ծարաւ thirst, — y.	խոզի ապուխա bacon.
ժում meal.	երշիկ sausage.

նախաճաշ breakfast.	երէ, որս game.
ճաշ dinner.	Հաւեղէն poultry.
ընթրիք supper.	ձուկ fish.
Հաց bread. ջուր water.	ձուազեղ omelet.
Թարմ հաց new bread.	բանջարեղէն vegetables.
օթեկ հաց stale bread.	հաւկիթ, ձու egg.
միս meat.	հերմաճ vermicelli.
արգանակ broth.	աղանդեք dessert.
խաշած միս boiled-meat.	պղակունդ, քաքար cake.
Թան, ապուր soup.	ծաղ pastry.
անուշեղէն sweets.	Ղերմօղի punch.
միրգ, պտուղ fruit.	լիմոնջուր lemonade.
կարագ butter.	տուրմ, կոլոհամ chocolate.
մածուն clotted milk.	կաթ milk.
պանիր cheese.	սեր cream.
ըմպելիք drink.	սուրճ coffee.
գինի wine.	Թէյ tea.
գարեջուր beer.	սուրճ մը առնել to take coffee.

13. Ժամանակ. Time.¹

եղանակ season.	Իրիկուն evening.
գարուն spring.	արշալոյս morning-twilight.
ամառ summer.	վերջալոյս evening-twilight.
աշուն autumn.	հետեւեալ օրը the following day.
ձմեռ winter.	ժամ hour.
տարի year.	կէս ժամ half an hour.
վեց ամիս half-year.	քառորդ ժամ quarter of an hour.
ամիս month.	վայրկեան minute.
չարաթ, եօթնեակ week.	երկվայրկեան second.
չարաթ մը առաջ a week ago.	
օր day. կէսօր noon, mid-day.	

Վաղանդ, նոր Տարի New year's day.	Չատիկ Easter.
Բարեկենդան Carnival.	Համբարձում Ascension- Day.
Մեծ Պահք Lent.	Ծնունդ Christmas.
Ծաղկազարդ Palm-Sunday.	տարեգարձ anniversary.

¹ The names of the months and days are given in the 20th lesson.

14. ՕՐԸ. *The weather.*

Հով	wind.	եղեամ	frost.
մրրիկ	storm.	սառ	ice.
անձրեւ	rain.	ձիւն	snow.
ծիածան	rain-bow.	ձիւնի հատիկ	snow-flake.
ամպ	cloud.	ձիւնագունտ	snow-ball.
որոտում	thunder.	սահամոյկ, շմուշկ	skates.
փայլակ	lightning.	շճիկել	to skate.
տաք, — ութիւն	heat.	բալետիր	sled.
ցուրտ	cold.	կարկուտ	hail.
բարեխառնութիւն	tempera- ture.	մեղ, մշուշ	fog, mist.
ջերմաչափ	thermometer.	սառնահալք	thaw.
աստիճան	degree.	ցոյեղեամ	hoar-frost.

15. ԿՐԼՆ-ԲԻՆ. *Instruction.*

Համալսարան	university.	աշխարհացոյց	map.
բանախօսութիւն	lecture.	պատճէն, օրինակ	copy.
ուսուցիչ	professor, teacher.	օրինակել	to copy.
ուսանող	student.	սետրակ	copy-book.
ուսումնարան	college.	գրատետր	writing-book.
դպրոց	school.	գիր	writing.
աշակերտ	pupil.	մկան, թանաք	ink.
հրահանգ	exercise.	կաղամար	} inkstand.
դաս, համար	lesson.	թանաքաման	
թարգմանութիւն	transla- tion.	գրիչ	pen.
բառարան	dictionary.	թուղթ	paper.
քերականութիւն	grammar.	ծծուն թուղթ	blotting-pa- per.
քարէ տախտակ	slate.	զմելի	penknife.
քարէ գրիչ	slate-pencil.	նամակ	letter.
մատիտ	pencil.	տոմս, տամակ	note, ticket.
մատտակալ	pencil-case.	նամակաթուղթ	note-paper.
գրչակալ	pen-holder.	հասցէ	address.
դրատախտակ	black-board.	պահարան	envelope.
կաւիճ	chalk.	կնիք	seal.
սպունգ	sponge.	կնքանշխար	wafer.
թերթակալ	port-folio.	կնքամոմ	sealing-wax.
քանակ	ruler.	թղթագրոյժ	stamp.

16. Արտեսանորներ. *Artisans.*

դերձակ tailor.	դարբին lock-smith.
կոշկակար shoemaker.	որմնադիր bricklayer.
վաճառական merchant.	կաղմարար book-binder.
գրավաճառ bookseller.	արուեստագէտ artist.
տպագրիչ printer.	նկարիչ painter.
սափրիչ barber.	վիրաբոյժ surgeon.
ատաղձագործ joiner.	ատամնաբոյժ dentist.
Հիւս carpenter.	պղնձագործ coppersmith.
Հացագործ baker.	ձկնորս fisher.
մսավաճառ butcher.	բժիշկ physician.
լուծոյափոխ money-changer.	նաւաստի sailor.
Ժամագործ watchmaker.	ոսկերիչ goldsmith.
կառնական coachman.	մրգավաճառ green-grocer.
ջաղացական miller.	նպարավաճառ grocer.
Թղթավաճառ stationer.	սեղանաւոր banker.

II. Synopsis of the Declensions of Ancient Armenian Nouns.

As the student of modern Armenian will often meet in books with forms of nouns derived from the ancient declensions, it has been thought advisable to append here a synoptical table of the declensions of ancient nouns.

There are *twelve regular declensions.*

First Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. Բան word.	Բանք words.
Gen., Dat. Բանի.	Բանից.
Acc. շ Բան. ¹	չ Բանս.
Abl. ի ² Բանի.	ի Բանից.
Inst. Բանիւ.	Բանիւք.

¹ Չ followed by a consonant is pronounced շչ, but in case the noun begins with a vowel, it forms no separate syllable.

² In nouns beginning with a vowel ի is substituted by Յ.

Second Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. քաղաք city.	քաղաքս ¹ cities.
Gen., Dat. քաղաքի.	քաղաքաց.
Acc. շքաղաք.	շքաղաքս. ²
Abl. է քաղաքի.	է քաղաքաց.
Inst. քաղաքս.	քաղաքսի.

Third Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. ժամ hour.	ժամք hours.
Gen., Dat. ժամն.	ժամաց.
Acc. շժամ.	շժամ.
Abl. է ժամի.	է ժամաց.
Inst. ժամն.	ժամսի.

Fourth Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. գետ river.	գետք rivers.
Gen., Dat. գետաց.	գետաց.
Acc. շգետ.	շգետս.
Abl. է գետաց.	է գետաց.
Inst. գետով.	գետովս.

Fifth Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. եկեղեցի church.	եկեղեցիք churches.
Gen., Dat. եկեղեցու.	եկեղեցուց.
Acc. շեկեղեցի.	շեկեղեցիս.
Abl. յեկեղեցուց.	յեկեղեցուց.
Inst. եկեղեցուս.	եկեղեցուսի.

¹ When the formative ք is preceded by ք, ց and ք, an unaccented euphonic ւ is inserted in the pronunciation, as: ազգ nation, ազգս (= ազգւք) nations; Բանակ army, Բանակս (= Բանակւք) armies; քաղաք city, քաղաքս (= քաղաքւք) cities.

² In case the formative ւ is preceded by any of the consonants, an unaccented euphonic ւ is inserted in the pronunciation, as: գետ river, գետս (= ըզգետւք) rivers (Acc.).

Sixth Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. Փոքր (<i>փոքր</i>) little (one).	Փոքր-ն + little (ones).
Gen., Dat. Փոքր-ն .	Փոքր-նց .
Acc. չՓոքր .	չՓոքր-ն .
Abl. է Փոքր-է (= <i>փոքրէ</i>).	է Փոքր-նց .
Inst. Փոքր-ով .	Փոքր-ովք .

Seventh Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. Հիմն (= <i>հիմք</i>) foundation.	Հիմն-ն + foundations.
Gen., Dat. Հիմն-ն .	Հիմն-նց .
Acc. չՀիմն .	չՀիմն-ն .
Abl. է Հիմն-նէ .	է Հիմն-նց .
Inst. Հիմն-ովք .	Հիմն-ովք .

Eighth Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. Գառն (= <i>...քն</i>) lamb.	Գառն-ն + lambs.
Gen., Dat. Գառն-ն .	Գառն-նց .
Acc. չԳառն .	չԳառն-ն .
Abl. է Գառն-նէ .	է Գառն-նց .
Inst. Գառն-ովք .	Գառն-ովք .

Ninth Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. Բարութիւն goodness.	Բարութիւն-ն + (goodnesses).
Gen., Dat. Բարութիւն-ն .	Բարութիւն-նց .
Acc. չԲարութիւն .	չԲարութիւն-ն .
Abl. է Բարութիւն-նէ .	է Բարութիւն-նց .
Inst. Բարութիւն-ովք .	Բարութիւն-ովք .

Tenth Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. Ոսկր (= <i>...քր</i>) bone.	Ոսկերք + bones.
Gen., Dat. Ոսկերք .	Ոսկերքց or Ոսկերք-ց .
Acc. չՈսկր .	չՈսկերք .
Abl. յՈսկերքէ .	յՈսկերքց or յՈսկերք-ց .
Inst. Ոսկերք-ովք .	Ոսկերքք + or Ոսկերք-ովք .

Eleventh and Twelfth Declensions.

Proper nouns

of men.

of women.

Singular.

Nom. Ադամ Adam.	Արմինէ Armineh.
Gen., Dat. Ադամայ.	Արմինէայ.
Acc. շԱդամ.	շԱրմինէ.
Abl. յԱդամայ.	յԱրմինէայ.
Inst. Ադամաւ.	Արմինէաւ.

Irregular Declensions.

First Declension.

Singular.

Plural.

Nom. Այր man.	Աբբ men.
Gen., Dat. Անն (= առքն).	Աբանց.
Acc. շԱյր.	շԱրս.
Abl. յԱննէ.	յԱբանց.
Inst. Արամբ.	Աբանբբ.

Second Declension.

Singular.

Plural.

Nom. Հայր father.	Հարբ fathers.
Gen., Dat. Հօր.	Հարց.
Acc. շՀայր.	շՀարս.
Abl. ի Հօրէ.	ի Հարց.
Inst. Հարբ.	Հարբբբ.

Third Declension.

Singular.

Plural.

Nom. Բայր sister.	Բորբ sisters.
Gen., Dat. Բեն.	Բերց.
Acc. շԲայր.	շԲարս.
Abl. ի Բենէ.	ի Բերց.
Inst. Բերբ.	Բերբբբ.

Fourth Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. Կին woman.	Կանայք women.
Gen., Dat. Կինջ .	Կանանց .
Acc. շԿին .	շԿանայս .
Abl. ի Կինջէ .	ի Կանանց .
Inst. Կանամբ .	Կանամբք .

Fifth Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. Գիւղ village.	Գիւղք villages.
Gen., Dat. Գիւղջ .	Գիւղից .
Acc. շԳիւղ .	շԳիւղս .
Abl. ի Գիւղէ .	ի Գիւղից .
Inst. Գիւղիւ .	Գիւղիւք .

Sixth Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. Օր day.	Աւուրք days.
Gen., Dat. Աւուր .	Աւուրց .
Acc. շՕր .	շԱւուրս .
Abl. յՕրէ .	յԱւուրց .
Inst. Աւուրբ .	Աւուրբք .

Seventh Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. Տիւ (= տիվ) day(-time).	Տիւք day(-time)s.
Gen., Dat. Տուրնջեան .	Տուրնջեանց .
Acc. շՏիւ .	շՏիւս .
Abl. ի Տուրնջեանէ .	ի Տուրնջեանց .
Inst. Տուրնջեամբ .	Տուրնջեամբք .

Eighth Declension.

<i>Singular.</i>	<i>Plural.</i>
Nom. Արեւելեայ Oriental.	Արեւելեայք Orientals
Gen., Dat. Արեւելայ .	Արեւելայց .
Acc. շԱրեւելայ .	շԱրեւելայս .
Abl. յԱրեւելայ .	յԱրեւելայց .
Inst. Արեւելաւ .	Արեւելաք .

III. Phrases for Armenian Conversation.

1.

Salutations.

On meeting in the morning, *Բարի լյս*, *Good morning*, the answer to which is *Աստուծոյ բարին*, *The blessing of God*.

In the middle of the day, *Բարեւ ձեզ*. The answer is the same as above.

On meeting in the evening, *Բարի իրիկուն*, *Good evening*. Reply as above.

At parting, the person who leaves says, *Մնա՛ք բարով*, *Good by, Farewell*. Answer, *Բարեւ* or *Երթա՛ք բարով*.

On separating in the evening, *Գիշեր բարի*, *Good night*. Answer, *Քեզ* or *ձեզ լյս բարի* or *Տէր ընդ ձեզ*.

Returning after an absence one is greeted with *Բարի եկաք* or *Եկաք*, *Welcome*. Reply, *Բարի տեսանք*.

Give my compliments... is expressed by *Յարգանքներս...*, or *Բարեւ ըրէ* or *ըրէք...* The person who is to convey them assumes the responsibility by saying *Գլխուս վրայ*, and acquits himself of it, when he meets the person to whom the greetings are sent, by saying, ... *ձեզ բարեւ կ'ընէ* or *ունի*, to which the other replies *Շնորհակալ եմ*, *Thanks*, or *Խրիող բերողը շատ ազրի* or *ողջ կենայ*.

At the beginning of the new year, *Շնորհաւոր նոր տարի*, *A happy new year*. Answer, *Աստուած շատ տարիներու հասցնէ*, or *Ամեն տարի բարով հասնիք*.

At Christmas, *Շնորհաւոր ծնունդ*, or *Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ*. Answer, *Օրհնեալ է ծնունդն Քրիստոսի*.

At Easter and for forty days after, *Քրիստոս յարեալ ի մեռելոց*, *Christ is risen from the dead*. Answer, *Օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի*, *Blessed be the resurrection of Christ*.

2.

Ի՞նչ ունիք.
Գիրք մը ունիմ.
Ո՞ր գիրքը ունիք.
Ձեր գիրքը ունիմ.
Գրիշ ունիս.

What have you?
I have a book.
What book have you?
I have your book.
Hast thou my pen?

Ո՛չ, ես քու գրիչդ չունիմ.	No, I have not thy pen.
Ո՞ր գրիչը ունիս.	What pen hast thou?
Իմ գրիչս ունիմ.	I have my pen.
Իմինս չէ՞.	Is it not mine?
Ո՛չ, քուկիինդ չէ.	No, it is not thine.
Քանի՞ մատիտ ունիք.	How many pencils have you?
Երկու մատիտ ունիմ.	I have two pencils.
Ո՞վ դանակ մը ունի.	Who has a knife?
Եղբայրս սուր դանակ մը ունի.	My brother has a sharp knife.
Հայրդ ի՞նչ ունի.	What has thy father.
Անիկա կարմիր ձի մը ունի.	He has a red horse.
Քանի՞ բարեկամ ունիք.	How many friends have you?
Երեք կամ չորս բարեկամ ունիմ.	I have three or four friends.

3.

Հաց ունի՞ք.	Have you any bread?
Այո՛, կտոր մը հաց ունիմ.	Yes, I have a piece of bread.
Հացը աղէկ է.	Is the bread good?
Այո՛, խիստ աղէկ է.	Yes, it is very good.
Կարագ ալ ունի՞ք.	Have you also some butter?
Ո՛չ, կարագ չունիմ.	No, I have no butter.
Կարագ կ'ուզէ՞ք.	Will you have some butter?
Եթէ հաճիք.	If you please.
Այդ փոքրիկ տղան ալ հաց ունի՞.	Has that little boy also any bread?
Ո՛չ, չունի.	No, he has none.
Բաւական հաց ունեցա՞ւ.	Has he had bread enough?
Մեծ կտոր մը ունէր.	He had a large piece.
Պանիրն ալ աղէկ է.	Is the cheese also good.
Աղէկ չեմ գտներ զայն.	I do not find it good.
Կաթ կ'ուզէ՞ք.	Will you have some milk?
Եթէ հաճիք, քիչ մը տուէք ինձ.	Give me some, if you please.
Ո՞վ կաթ կ'ուզէ.	Who wants some milk?
Տղաքը կաթ կ'ուզեն.	The children want some milk.
Գինի ունի՞ք.	Have you any wine?
Այո՛, ունիմ.	Yes, I have some.

Ի՞նչ տեսակ գինի ունիք.	What kind of wine have you?
Թէ կարմիր եւ թէ ճերմակ գինի ունիք.	We have both red and white wine.
Բաժակ մը գինի կ'ուզէ՞ք.	Will you have a bottle of wine?
Ո՛չ, չեմ ուզեր.	No, I will not.
Գինին աղէկ կը գտնէ՞ք.	Do you find the wine good?
Խիստ աղէկ չէ.	It is not very good.
Գաւաթ մը ջուր կուտա՞ք ինձ.	Will you give me a glass of water?
Ահա գաւաթ մը զով ջուր.	Here is a glass of fresh water.

4.

Ի՞նչ կորսնցուցիք.	What have you lost?
Քսակս կորսնցուցի.	I have lost my purse.
Ո՞վ բան մը կորսնցուց.	Who has lost anything?
Բարեկամս բան մը կորսնցուց.	My friend has lost something.
Ի՞նչ կորսնցուց.	What has he lost?
Իր մատանին կորսնցուց.	He has lost his ring?
Ո՞վ մատանի մը գտաւ.	Who has found a ring?
Այս փոքրիկ տղան մատանի մը գտաւ.	This little boy found a ring.
Ան ձե՛ր մատանին է.	Is that your ring?
Այո՛, իմ մատանին է.	Yes, that is my ring.
Հովանոցս տեսա՞ծ էք.	Have you seen my umbrella?
Ո՛չ, բայց ձեր հովանոցակը տեսած եմ.	No, but I have seen your parasol.
Ի՞նչ գնեցիք.	What have you bought?
Քէչ մը թուղթ գնեցի.	I have bought some paper.
Ի՞նչ տեսակ թուղթ գնեցիք.	What sort of paper have you bought?
Դամակաթուղթ գնեցի.	I have bought some letter paper.
Որո՞ւ համար գնեցիր զայն.	For whom have you bought it?
Մօրս համար գնեցի զայն.	I have bought it for my mother.

Ձեր ձին ծախեցի՞ք .	Have you sold your horse?
Այո՛, ծախեցի զայն .	Yes, I have sold it.
Որո՞ւ ծախեցիք ձեր տունը .	To whom have you sold your house?
Մեր տունը . Գեո չծախեցինք զայն .	Our house? We have not yet sold it.
Ուրեմն ի՞նչ ծախեցիք .	What have you sold then?
Հօրեղբորս տունը ծախեցի .	I have sold my uncle's house.
Նամակ մը ստացա՞ք .	Have you received a letter?
Այո՛, նամակ մը ստացայ .	Yes, I have received a letter.
Որմէ՞ ստացաք նամակը .	From whom have you received the letter?
Քեռ.աղջիկէս ստացայ զայն .	I have received it from my niece.

5.

Այսօր տեսա՞ք ձեր բարեկամը .	Did you see your friend to-day?
Ո՛չ, այսօր չտեսայ զայն .	No, I did not see him to-day.
Երեկ տեսա՞ք զայն .	Did you see him yesterday?
Այո՛, երեկ տեսայ զայն .	Yes, I saw him yesterday.
Ո՞վ տեսաւ Եդուարդի ժամա- ցոյցը .	Who saw Edward's watch?
Ես չտեսայ զայն .	I did not see it.
Ոսկի՞ ժամացոյց մըն է .	Is it a gold watch?
Ո՛չ, արծաթ ժամացոյց մըն է .	No, it is a silver watch.
Ժամացոյցի շղթայ մըն ալ ունի՞ք .	Has he also a watch chain?
Այո՛, սակի շղթայ մը ունի .	Yes, he has a gold chain.

6.

Անօթի՞ք էք .	Are you hungry?
Այո՛, անօթի եմ .	Yes, I am hungry.
Ծարա՞ն էք .	Are you thirsty?
Այո՛, ծարաւ ենք .	Yes, we are thirsty.
Իրաւունք ունի՞ք թէ անիրաւ էք .	Are you right or wrong?
Մենք միշտ իրաւունք ունինք .	We are always right.

Ո՞վ անիրաւ էր. Who was wrong?
 Աշակերտը անիրաւ էր. The pupil was wrong.
 Տղարը անօթի են թէ ծարաւ. Are the children hungry
 or thirsty?
 Անոնք թէ անօթի են թէ ծարաւ. They are both hungry and
 thirsty.
 Տակաւին բան մը կերած չե՞ն. Have they not eaten any-
 thing yet?
 Կտորիկ մը հաց կերած են. They have eaten a *small*
 bit of bread.
 Ո՞վ կերաւ խնձորս. Who has eaten my apple?
 Ալիկ կերաւ զայն. Alice has eaten it.

7.

Կը ճանչնայք այս պարոնը. Do you know this gentle-
 man?
 Ո՛չ, չեմ ճանչնար զանիկա. No, I do not know him.
 Ո՞վ է. Who is he?
 Օտարական մըն է. He is a foreigner.
 Հոյն է թէ Յոյն. Is he an Armenian or a
 Greek?
 Անիկա ո՛չ հայ է, ո՛չ Յոյն. He is neither Armenian nor
 Italian; he is an Italian.
 Հայերէն կը խօսի. Does he speak Armenian?
 Այո՛, լաւ հայերէն կը խօսի. Yes, he speaks Armenian
 well.
 Անկլեերէն ալ կը խօսի. Does he also speak Eng-
 lish?
 Գիչ մը կը խօսի. He speaks a little.
 Օրիորդ, իտալերէն կը հասկե-
 նայք. Do you understand Italian,
 Miss?
 Այո՛, բայց խօսելու յաջողա-
 կութիւնը չունիմ. Yes, but I have not the
 facility of speaking it.
 Թուրքերէն կը սովորէր կ՞ը. Are you learning Turkish?
 Այո՛, զայն կը սովորիմ կ՞ը. Yes, I *am* learning it.

8.

Այսօր ի՞նչ է. What day is to-day?
 Այսօր երկուշաբթի է. To-day is Monday.
 Որո՞նք են շաբթուան միւս օ-
 րերը. Which are the other days
 of the week?

Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի, Ուրբաթ, Շա- բաթ եւ Կիրակի.	Tuesday, Wednesday, Thursday, Friday, Sa- turday and Sunday.
Ե՞րբ ժամանեց (or հասաւ) ձեր հօրեղբորդին.	When did your cousin ar- rive?
Անիկա անցեալ Ուրբաթ ժա- մանեց.	He arrived last Friday.
Ե՞րբ պիտի մեկնի.	When will he go away?
Յառաջիկայ (or դաւ) Երեք- շաբթի.	Next Tuesday.
Այսօր ամսուս քանի՞ն է.	What day of the month is it to-day?
Այսօր տասնեւվեցն է.	To-day it is the sixteenth.
Երէկ տասնեւչորսը չէ՞ր.	Was it not the fourteenth yesterday?
Ներեցէք, տասնեւհինգն էր.	I beg your pardon, it was the fifteenth.

9.

Ի՞նչպէս քնացաք անցեալ գիշեր.	How did you sleep last night?
Հնորհակալ եմ, խիստ լաւ քնացայ.	Thank you, I slept very well.
Ո՞րչափ քնացաք.	How long did you sleep?
Եօթը ժամ քնացայ.	I slept seven hours.
Դուք ո՞րչափ կը քնանաք.	How long do you sleep?
Սովորաբար ութը ժամ կը քնանամ.	I usually sleep eight hours.
Եղբայրդ կը քնանայ տակաւին.	Is your brother still sleep- ing?
Կարծեմ էլած է.	I believe that he is up.
Ժամը քանի՞ն կ'ելէք.	At what o'clock do you get up?
Չմեռը ժամը եօթին կ'ելեմ, եւ ամառը ժամը վեցին.	I get up at seven o'clock in winter; and at six o'clock in summer.
Կ'ուզէք հետս նստաճաշել.	Will you breakfast with me?
Հատ ալնիւ էք. արդէն նա- խաճաշած եմ.	You are very kind; I have already breakfasted.

10.

Օրերը ե՞րբ ամենաերկայն են. Ամառը, Յունիս ամսուան մէջ.	When are the days longest? In summer, in the month of June.
Ո՞րն է տարուան ամենաերկայն օրը. Յունիս քսաներկուրդը. Չմեռուան օրերը ի՞նչպէս են. Կարճ են. Ի՞նչ գիշերները ի՞նչպէս են. Խիստ երկայն են. Տարուան մէջ քանի՞ ամիս կայ.	Which is the longest day in the year? The 22 nd of June. How are the days in winter? They are short. And how are the nights? They are very long. How many months are there in a year?
Տարին տասներկու ամիս ունի. Ամսուան մէջ քանի՞ օր կայ.	A year has twelve months. How many days are there in a month?
Ամիսներէն ամանք 30 օր ու նին, ուրիշներ՝ 31 օր. Փետ- րուարը միայն 28 օր ունի.	Some months have 30, others 31 days; February has only 28.

11.

Երէկ Անկլիացին ի՞նչ խոստա- ցաւ ձեզ. Խոստացաւ ինձ այցելել զիս այսօր ժամը տասնին. Իր խոստումը պահե՞ց. Այո՛. Ժամը տասնին եկան ձեզ. Ճիշտ ժամը տասնին եկաւ. Ի՞նչ ուզեց. Լոնտոնէն եկած նամակ մը տուաւ ինձ. Նամակը ուրիշ լուր կը պա- րունակէր. Այո՛, երբեք խիստ կարեւոր լուրեր կը պարունակէր. Գաղտնիք մըն է. Ո՛չ, եթէ կը փոփոքիք, կրնամ ըսել ձեզ.	What did the Englishman promise you yesterday? He promised to call upon me at ten o'clock to-day. Did he keep his promise? Yes, he did. Was he with you at ten o'clock? He came punctually at ten o'clock. What did he want? He gave me a letter from London. Did the letter contain any news? Yes, it contained some im- portant news. Is it a secret? No, I can tell it to you, if you wish it.
---	--

12.

Այ՛, կը մի՛մ. ցուրտէն կը գողգոլամ.	Do you feel cold? Yes, I feel cold. I tremble with cold.
Ո՛ւսկից կու գաս. Նուազահանդէսէն կու գամ.	Where do you come from? I come from the concert.
Ինչո՞ւ այսքան թրջուած էք. Անձրեւէն թրջուած եմ.	Why are you so wet? I have been made wet by the rain.
Ա՛նձրեւէ՞ ուրեմն. Ստուգիւ, բաւական սաստիկ կ'անձրեւէ.	Does it rain then? Certainly, it rains rather fast.
Հովանոց չունէիք. Ո՛չ, հետս չունէի.	Had you no umbrella? No, I had none with me.
Ինչո՞ւ հետերնիդ հատ մը չա- ռիք, երբ տունէն ելաք.	Why did you not take one with you, when you left home?
Երբ տունէն մեկնեցայ, բնաւ անձրեւ չէր տեղար.	When I left home, it did not rain at all.
Ապրիլի մէջ առանց հովանոցի տունէն ելլելու չէ.	In April one should not go out without an umbrella.
Շատ թրջուած էք. Բոլորովին թրջուած եմ.	Are you very wet? I am wet through and through.
Արեւմ հրամայեւ ձեզ իմ հո- վանոցս.	May I offer you my um- brella?
Շնորհակալութեամբ պիտի ընդունիմ զայն.	I will accept it with thanks.
Ծիածանը կը տեսնէք. Ա՛, այ՛, քնչ գեղեցիկ է.	Do you see the rain-bow? Ah! yes, how beautiful it is!
Ո՛ւր են աղաքը. Բակն են.	Where are the children? They are in the yard.
Աշակերտները ո՞ւր են. Գարոցն են.	Where are the pupils? They are at school.
Փիբէ պտոյտի ելած է. Այ՛, պտոյտ մը ըրած է. Ո՛վ կար իրեն հետը. Իբ հօբաքայրը հետն էր. Ծաղիկներ գտան.	Has Phebe been out for a walk? Yes, she has taken a walk. Who was with her? Her aunt was with her. Did she find any flowers?

Հատ մանուշակ գտաւ. She found many violets.
 Վարդ մը չունեցաւ. Has she not had a rose?
 Այո՛, վարդ մըն ալ ունէր. Yes, she had a rose too.

13.

Օտարականը հասաւ (or ժամանեց). Has the stranger arrived?
 Այո՛, երէկ հասաւ. Yes, he arrived yesterday.
 Քանի՞ սպասաւոր ունի. How many servants has he?
 Երկու կամ երեք հատ ունի. He has two or three.
 Իշխանը մեկնած է. Has the prince gone away?
 Դեռ մեկնած չէ. He has not yet set off.
 Ե՞րբ պիտի մեկնի. When will he leave?
 Վաղը պիտի մեկնի. He will go away to-morrow.
 Ժամը քանի՞ն պիտի մեկնի. At what o'clock will he set out?
 Ժամը ութին. At 8 o'clock.
 Ո՞ւր կ'երթայ ի՞ր. Where is he going?
 Գիւղը կ'երթայ ի՞ր. He is going into the country.
 Գիւղը դղեակ ունի՞. Has he a castle in the country?
 Խիստ գեղեցիկ դղեակ մը ունի հոն. He has a very beautiful castle there.

14.

Արեգակը մեծ է. Is the sun large?
 Խիստ մեծ է. երկրէն շատ աւելի մեծ է. It is very large; it is much larger than the earth.
 Լուսինն ալ երկրէն մեծ է. Is the moon also larger than the earth?
 Ընդ հակառակը, երկիրը Լուսինէն աւելի մեծ է. On the contrary, the earth is larger than the moon.
 Քանի՞ տարեկա ն էք, Յովէփ. How old are you, Joseph?
 Տասներկու տարեկան եմ. I am 12 years old.
 Ի՞րոյրդ քանի՞ տարեկան է. How old is your brother?
 Քսան տարեկան է. He is 20 years old.
 Ե՞րբ ծնած է. When was he born?
 Անիկա ծնած է հազար ութ հարիւր եօթանասուն եւ ինը Յունուար տասնին. He was born on the tenth of January 1879.
 Ո՞ր օր. On what day?
 Մայիս 25 ին. On the 25th of May.

15.

Ո՞վ առած է մկրասու.	Who has taken my scissors?
Օրիորդ Էլիզա առած է զայն.	Miss Eliza has taken them.
Ինչո՞ւ առած է զայն.	Why has she taken them?
Իրենը գտած չէ.	She has not found her own.
Չերինը ինձ փոխ կու տայք.	Will you lend me yours?
Հաճուի՞թեամբ. ահառասիկ.	With pleasure; here they are.
Մտանոցդ կ'ուզե՞ս.	Do you want your thimble?
Այո, կ'ուզեմ զայն.	Yes, I want it.
Կ'ուզէ՞ք բան մը կարել.	Will you sew anything?
Քանի մը շապիկ պիտի կարեմ.	I will sew some shirts.
Արմէ՞ կարել սովորեցաք.	From whom have you learnt to sew?
Դերձակուհի է մը.	From a seamstress.

16.

Ընելու շատ բան ունի՞ք.	Have you much to do?
Այո, ընելու շատ բան ունինք.	Yes, we have a great deal to do.
Ընելու այլքան հրահանգ կ'ունենա՞ք միշտ.	Have you always so many exercises to do?
Ո՛չ միշտ.	Not always.
Սովորելու բառեր ալ ունի՞ք.	Have you also any words to learn?
Ստուգիւ, եւ ո՛չ մէկ լեզու կրնանք հասկնալ առանց բառեր սովորելու.	Certainly, we can understand no language without learning words.
Ամեն օր քանի՞ բառ սովորելու էք.	How many words have you to learn every day?
Պարագաներէն կախում ունի: Երբեմն 15 էն քսան. երբեմն ալ աւելի.	It depends on circumstances. Sometimes 15 to 20, sometimes also more.

17.

Կ'ուզէ՞ք հետս պտոյտ մը ընել հիմա.	Will you take a walk with me now?
Այլ ցաւիմ օր ժամանակ չունիմ հիմա.	I am sorry, I have no time now.

Ճաշէ վերջ կ'ուզէք հետս պտոյտ մը ընել.	Will you take a walk with me after dinner?
Հաճութեամբ, զձեզ առնելու պիտի գամ.	Willingly, I shall come for you.
Ժամը քանի՞ն պիտի գար.	At what o'clock will you come?
Ժամը վեցէն քիչ վերջը պիտի գամ.	I shall come a little after six o'clock.
Երէկ որո՞ն հետ պտոյտի (or չըջագայութեան) ելար.	With whom did you take a walk yesterday?
Քեռորդույս հետ.	With my nephew.
Քեռորդիդ դեռ չմեկնեցամ.	Has your nephew not yet left?
Ո՛չ, անիկա հոս է տակաւին.	No, he is still here.
Ե՞րբ պիտի մեկնի.	When will he set out?
Անոր մեկնելու օրը որոշուած չէ տակաւին.	The day of his departure is not yet fixed.
Երկույն ճամբորդութիւն մը պիտի ընէ.	Will he make a long jour- ney?
Անիկա պիտի ճամբորդէ Ֆրանս- սայի մէջ եւ պիտի չվերա- դառնայ մինչեւ երկու ամիս.	He will travel in France, and will not be back again for two months.

18.

Չէք գիտեր թէ ուր է գըլ- խարկս.	Do you not know where my hat is?
Ո՛չ, չեմ գիտեր.	No, I do not.
Սպասուորը անոր ուր ըլլաւ գիտէ.	Does the servant know where it is?
Ան ալ չի գիտեր.	He does not know either.
Կանխաւ հարցուցիք իրեն.	Have you asked him al- ready?
Հաւանական է սպասուհին գի- տէ.	Perhaps the maid-servant knows.
Կարելի է որ գիտէ, քանզի ա- նիկա մաքրեց ձեր սենեակը.	It is possible that she does, because she has cleaned your room.
Հաճեցէք կանչել զինքը.	Call her, please.
Ի՞նչ կը հրամէք, Տէր.	What is your pleasure, Sir?
Ո՞ւր դրած էք գլխարկս.	Where have you put my hat?

Հանդերձանոցը դրած եմ.	I have put it in the wardrobe.
Որո՞նք մէջ.	In which?
Այս հանդերձանոցին մէջ.	In this wardrobe.
Հիմա հոն չկո՞յ.	Is it no longer there?
Տակուսին չնայեցայ հոն.	I have not yet looked there.
Ո՞ր է բանալին. ո՞ւր դրած էք զայն.	Where is the key? Where have you put it?
Գամէն կախած եմ.	I have hung it on the nail.
Հոն կախուած չէ.	It is not hanging there.
Աւր ինկած ըլլալու է ուրեմն.	Then it must have fallen down.
Ահաւաստիկ.	There it lies.
Աւրցուցէք, եթէ կը հաճիք.	Pick it up, if you please.

19.

Ո՞վ շինեց (or կառոյց) այս տունը.	Who has built this house?
Պ. Միւլլէր անուն մէկը.	A certain Mr. Müller.
Անիկա անձամբ կը բնակի անոր մէջ.	Does he inhabit it himself?
Ո՛չ, անձամբ չի բնակիր անոր մէջ.	No, he does not live in it himself.
Ո՞ւր կը բնակի ուրեմն.	Where does he live then?
Ուրիշ փողոց մը կը բնակի.	He lives in another street.
Ուրիշ տուներ ունի՞.	Has he any other houses?
Այո՛, երեք տուն ունի.	Yes, he has three houses.
Հարսուտ է.	Is he rich?
Այնպէս կ'ըսեն, բայց չեմ հաւատար.	They say so; but I do not believe it.
Իր կինը կ'ապրի՞ (or ո՞ղջ է) տակաւին.	Is his wife still living?
Ո՛չ, մեռած է.	No, she is dead.
Շատո՞նց մեռած է.	Is it long since she died?
Երեք տարի առաջ մեռաւ.	She died three years ago.
Ի՞նչ էր տարիքը or քանի՞ տարեկան էր.	What was her age?
Երեսունեւեօթը տարեկան էր.	She was 37 years of age.

20.

- Դրացւոյս մեռնիլը լրեցիք. Did you hear that my neighbour has died?
 Ո՛չ, Տէր, չլրեցի. ե՞րբ մեռաւ. No, I have not heard of it; when did he die?
 Անցեալ գիշեր մեռաւ. He died last night.
 Ի՞նչ հիւանդութենէ մեռաւ. Of what illness did he die?
 Ժանտատենդէ մեռաւ. He died of the typhoid fever.
 Որչափ ատեն հիւանդ եղաւ (OR պսակեցաւ). How long was he ill?
 Վեց շաբաթ հիւանդ պսակեցաւ. He was ill for six weeks.
 Ձեր բարեկամն էր. Was he your friend?
 Այո՛, լաւագոյն բարեկամն էր. Yes, he was my best friend.
 Ո՞ւր ծանօթացաք անոր հետ. Where did you make his acquaintance?
 Ատանայի մէջ ծանօթացայ անոր հետ. I made his acquaintance at Adana.
 Ատանայի մէջ շատ ծանօթներ ունիք. Have you many acquaintances at Adana?
 Քանի մը հաստ ունիմ. շատերը մեռած են. I have a few; most are dead.

21.

- Վաղը դի՛ս տեսնել կու գայ՞ք. Will you come to see me to-morrow?
 Այո՛, եթէ ժամանակ ունենամ. Yes, if I have time.
 Ձեր քեներն ալ պիտի գայն. Will your sister-in-law come too?
 Ձեմ կարծեք որ կ'այ. բայց աներձագս հետս պիտի գայ. I believe that she will not come; but my brother-in-law will come with me.
 Պիտի գնէիք այս ձին, եթէ ծախու ըլլալը գիտնայիք. Would you have bought this horse, if you had known that it was to be sold?
 Ո՛չ, պիտի չգնէի. Ինձի հաճելի չի գար. No, I would not have bought it; it does not please me.

Միշտ հայերէն պիտի խօսէիք, եթէ գիտնայիք զայն.	Would you always speak Armenian, if you knew it?
Միշտ պիտի չխօսէի, բայց երբեմն.	I should not always speak it, but sometimes.
Ֆրանսերէն չէք խօսիր.	Do you not speak French?
Ո՛չ, Տէր, բայց թուրքերէն եւ անկլիերէն կը խօսիմ.	No, Sir, but I speak Tuk- ish and English.

22.

Ժամացոյցի բանալիս պէտք ունիք տակաւին.	Do you still want my watch-key?
Ո՛չ, այլ եւս պէտք չունիմ անոր.	No, I do not want it any longer.
Չերինը կորսնցուցիք.	Have you lost yours?
Չեմ կրնար գտնել զայն.	I cannot find it.
Այս տղան նոր կոշիկի պէտք ունի.	Does this boy want new shoes?
Անիկա զոյգ մը նոր կոշիկի պէտք ունի.	He wants a new pair of shoes.
Իրենները մաշած են.	Are his worn out?
Այո՛, բոլորովին ծակծկած (or ծակերով լեցուն) են.	Yes, they are quite full of holes.
Որչանի հազաւ զանոնք.	How long has he worn them?
Երկու ամիս հազաւ զանոնք.	He has worn them two months.
Նոր զգեստի ալ պէտք չունի.	Does he not also want new clothes?
Այո՛, անիկա նոր վերարկուի մը եւ տաբատի մը պէտք ունի.	Yes, he wants a new coat and a pair of trowsers.

23.

Ի՞նչ բանի վրայ կը խորհիք.	What are you thinking of?
Ապագայիս վրայ կը խորհիմ.	I am thinking of my future.
Ի՞նչ բան խորհիլ կու տայ ձեր ապագային վրայ.	What makes you think of your future?
Պէտք է որ զբաղուիմ մը ընտ- րեմ.	I must choose a profession.

- Ո՞վ կը փափայրի որ այդպէս
ընէք. Who desires you to do so?
- Հայրս կը փափայրի. My father does.
- Հիմա որոշման մը յանդամ՞ծ էք. Are you now decided?
- Ո՛չ, դեռ որոշման մը յան-
գամ չեմ. No, I have not yet decid-
ed.
- Եթէ ինձ խորհուրդ կը հարց-
նէք, ես խորհուրդ կու տամ
ձեզ որ վաճառական ըլլաք.
քանզի ամբողջ աշխարհը
բաց է վաճառականութեան.
Շնորհակալ եմ ձեր խորհուր-
դին համար. If you ask my advice, I
should advise you to be a
merchant; for the whole
world is open to com-
merce.
- I thank you for your ad-
vice.

III. Reading Exercises.

A. Prose.

1.

Աին մը հաւ մը ունէր, որ ամեն օր հաւկիթ մը կ'ածէր: Բայց կինը գո՛հ չէր անով. նէ կ'ուզէր օրը երկու հաւկիթ ստանալ, քանզի խիստ սուղ կը ծախէր զանոնք: Ուստի աւելի հաւկիթ ունենալու յուսով, պարարեց հաւը: Սակայն խաբուեցաւ. հաւը շատ գիրցաւ եւ ալ հաւկիթ չածեց:

Հարցարձ. — Աին մը ի՞նչ ունէր: Հաւը ամեն օր քանի՞ հաւկիթ կ'ածէր: Աինը գո՛հ էր անով: Ինչո՞ւ գո՛հ չէր: Օրը քանի՞ հաւկիթ ստանալ կ'ուզէր: Աւելի հաւկիթ ունենալու յուսով ի՞նչ ըրաւ: Յաջողեցա՞ւ: Ինչո՞ւ չյաջողեցաւ:

2.

Քամանակաւ լոնտոնցի քաղաքապետ մը խնդրեց հեղինակէ մը որպէս զի ճառ մը գրէ իրեն համար՝ քաղաքապետարանին մէջ ատենախօսելու: «Պարտիմ՝ նախ ճաշել ձեզ հետ, պատասխանեց նա, եւ տեսնեմ թէ ի՞նչպէս կը բանաք ձեր բերանը՝ գիտնալու համար թէ ի՞նչ տեսակ բառեր կը յարմարին անոր:»

Հարցարձ. — Քաղաքապետ մը ի՞նչ խնդրեց հեղինակէ մը: Ո՞ր պիտի ատենախօսէր: Հեղինակը ի՞նչ պատասխանեց: Ինչո՞ւ համար նախ ճաշելու էր անոր հետ: Լոնտոն որ երկրի մայրաքաղաքն է: Անկլիա Եւրոպայի որ կողմն է:

3.

Մուրացկան մը ուրիշ մուրացկանի մը հանդիպելով՝ հարցուց անոր. «Ի՞նչ եղաւ Յովհաննէս՝ մեր վաղեմի բարեկամը»: «Աւա՛ղ, սիրելիս, պատասխանեց միւսը, հէ՛գ Յովհաննէս կախուելու դատապարտուեցաւ, սակայն նա ազատեց իր կեանքը՝ բանտին մէջ մեռնելով:»

Հարցաբան. — Մուրացկան մը որո՞ւ հանդիպեցաւ: Ի՞նչ հարցուց անոր: Յովհաննէս ի՞նչ բանի դատապարտուած էր: Ի՞նչպէս ազատեց իր կեանքը:

4.

«Չեր ձեռքը չափազանց անհանգիստ կ'ընէ զիս, ըսաւ իշխան մը շատախօս մի անձի, որ ճաշի ատեն իրեն քով նստած՝ անընդհատ կը շաղակրատէր ձեռքի շարժումներով: «Իրօք, տէր իմ, պատասխանեց շաղիաղփը, սեղանին վրայ այնքան խոնուած ենք որ չեմ գիտեր թէ ո՞ւր դնեմ ձեռքս:» «Բերնիդ վրայ դիր, ըսաւ իշխանը:

Հարցաբան. — Իշխան մը ի՞նչ ըսաւ անձի մը: Ի՞նչպիսի անձ մըն էր ան: Որո՞ւն քով նստած էր ան: Ի՞նչ կ'ընէր շաղիաղփը: Ի՞նչ առարկեց ան: Ի՞նչ թիւղորեց իշխանը: Ի՞նչ ըսել կ'ուզէր անով:

5.

Վէր. (= վերապատուելի = doctor) Սաութհ, անգամ մը երբ կը քարոզէր Կարոլոս Բ. (= երկրորդ) ի առջեւ, դիտեց որ ինքնակալը եւ անոր բոլոր հետեւորդները սկսան մրափել: Քիչ վերջը լսելով որ անոնցմէ ոմանք կը խորդան, ընդմիջեց իր քարոզը եւ գոչեց. «Լորտ Լօտրրտէյլ, կ'աղաչեմ արթնցէք. քանզի այնքան բարձր կը խորդաք որ պիտի արթնցնէք թագաւորը»:

Հարցաբան. — Վէր. Սաութհ որո՞ւն առջեւ կը քարոզէր: Կարոլոս Բ. ո՞ր երկրի թագաւորն էր: Վերապատուելին ի՞նչ դիտեց եւ ի՞նչ ըրաւ: Որո՞ւ ուղղեց (addressed) իր խօսքը: Ի՞նչ ըսաւ Լորտ Լօտրրտէյլ:

6.

Ազնուական մը իր պալատին պատուհանը կեցած՝ տեսնելով որ իշապան մը անգթօրէն կը ծեծէ իր էջը, կը կանչէ եւ կ'ըսէ. «Ար բաւէ, կը բաւէ, ձեռքդ քեզի քաշէ, սրիկայ, եթէ զչ կուգամ կը խարազանեմ զքեզ» : «Ներեցէք, ազնիւ պարոն, կը պատասխանէ իշապանը, չէի գիտեր որ էջս ազգականներ ունի արքունիքի մէջ» :

Հարցաբան. — Ո՞ր կեցած էր ազնուական մը: Զո՞վ տեսաւ: Ի՞նչ կ'ընէր իշապանը: Ի՞նչ սպառնացաւ իշապանին: Ի՞նչ հեգնական պատասխան տուաւ իշապանը:

7.

Ատենօք գիւղացի մը, որ Բարիզի Բօնթ-օ-Շանտ կամուրջէն կ'անցնէր, մի քանի խանութներու մէջ վաճառք չնշմարեց: Հետաքրքրութենէ մղուած՝ միջնորդի մը խանութին մօտեցաւ եւ ապուշ նայուածքով մը հարցուց. «Պարոն, կը հաճի՞ք ըսել ինձ թէ ի՞նչ ապրանք կը վաճառէք» : Վաճառականը ուզելով զուարճանալ՝ հեգնաբար պատասխանեց մարդուկին. «Էշու գլուխ կը վաճառեմ» : «Խաչ որ, պատասխանեց գիւղացին, պէտք է մեծ խնդրանք ունեցած ըլլաք. քանզի կը տեսնեմ որ միայն հատ մը մնացած է ձեր խանութին մէջ» :

Հարցաբան. — Գիւղացի մը ո՞րկէ կ'անցնէր: Ո՞ր է Բարիզ: Ո՞ր պետութեան մայրաքաղաքն է: Գիւղացին ի՞նչ չնշմարեց: Ի՞նչ բանէ մղուեցաւ: Որո՞ն խանութին մօտեցաւ: Ի՞նչպիսի նայուածք մը ունէր: Ի՞նչ հարցուց: Վաճառականը ի՞նչ կերպով վարուեցաւ: Ի՞նչ էր գիւղացւոյն սրամիտ պատասխանը: Լաւ չպատասխանեց նա:

8.

Էշ մը սովալուկ գայլի մը հանդիպելու դժբաղդութիւնը ունեցաւ: «Գթա՛ ինձ, ըսաւ դողահար կենդանին. եղուկ անասուն մըն եմ. նայէ՛ թէ որքան խոշոր փուշ մը մտուած է ոտքիս մէջ» :

“Յիրաւի կը վշտակրիմ՝ քեզ, պատասխանեց գայլը, խղճմտօրէն խօսելով՝ զքեզ քու թշուառութենէդ զերծելու հարկադրուած կ'զգամ ինքզինքս:”

Դեռ խօսքը բերանն էր, եւ ահա կտոր կտոր ըրաւ աղերսարկու աւանակը:

Հարցաբան. — Էշ մը որո՞ւ հանդիպեցաւ: Գայլը կ'ընչտ էր: Ի՞նչ աղերսեց խեղճ էջը: Ի՞նչ միտած էր անոր ոտքին մէջ: Ի՞նչպէս պատճառարանեց գայլը: Ի՞նչ եղաւ էշուն վախճանը: Կարելո՞ է անգութէն գութ յուսալ:

9.

Ընկերական ակումբի մը մէջ կին մը կը պատմէր թէ իր ամուսնին հետ կռիւ մըն է ունեցեր եւ ապա հաշտուելով՝ այրը ի յիշատակ ասոր ծառ մըն է տնկեր: “Տեսա՞ր, ըսաւ կամացուկ մը, մի ուրիշ կին իր ամուսնին, եթէ մենք ալ ասանկ ըրած ըլլայինք, ցարդ գեղեցիկ անտառ մը ունեցած կ'ըլլայինք:”

Հարցաբան. — Կին մը որո՞ւն հետ կռիւ ունեցեր էր: Ո՞ւր կը պատմէր այդ մասին: Այրը ի՞նչ տնկած էր ի յիշատակ հաշտութեան: Ուրիշ կին մը ի՞նչ յիշեցուց իր ամուսնին: Ի՞նչ ըսել կ'ուզէր ատով:

10.

Օրիորդ մը ծովը ինկաւ. խեղդուելու վրայ էր, երբ Նիւֆաունտլէնտեան շուն մը ազատեց զանիկա: Զգայազիրկ տուն տարուեցաւ. երբ սթափեցաւ, յայտնեց թէ որոշած էր ամուսնանալ իր ազատարարին հետ: Հայրը ըսաւ թէ անկարելի էր այդ: “Ամուսնացած է”, հարցուց աղջիկը: “Ո՛չ, բայց ազատարարդ շուն մըն է:”

Հարցաբան. — Օրիորդ մը ո՞ւր ինկաւ: Ո՞վ ազատեց զինքը: Ի՞նչ վիճակի մէջ տուն տարուեցաւ: Երբ սթափեցաւ, ի՞նչ որոշում յայտնեց: Կարելո՞ էր ամուսնանալ իր ազատարարին հետ: Ինչո՞ւ կարելի չէր:

11.

Դարե՛հ՝ Պարսկաստանի թագաւորը՝ տասը հազար տաղանթ մատուց Աղեքսանդրի, պայմանաւ որ Ասիան հաւասարապէս բաժնէ իրեն հետ: Իսկ մեծ յաղթականը պատասխանեց. « Երկիրը չկրնար երկու արեւ կրել, ո՛չ ալ Ասիա՝ երկու թագաւոր »: Բարմենիոյ՝ Աղեքսանդրի բարեկամներէն մին, որ լսած էր Դարեհի մատուցած պարգեւէն մասին, ըսաւ. « Եթէ ես Աղեքսանդր ըլլայի, պիտի ընդունէի »: « Ես ալ պիտի ընդունէի, եթէ Բարմենիոյ ելած ըլլայի », պատասխանեց Մակեդոնիացի առիւծը:

Հարցո՞ւմ. — Ո՞վ էր Դարեհ: Որո՞նք են Պարսկաստանի սահմանները: Ո՞վ էր Աղեքսանդր: Ո՞ր էր իր ծննդավայրը: Մակեդոնիա Եւրոպայի ո՞ր կողմն է: Դարեհ քանի՞ տաղանթ մատուց Աղեքսանդրի: Սոյն վերջինը ընդունե՞ց առաջինն առաջարկը: Ի՞նչ պատասխանեց: Ո՞վ էր Բարմենիոյ: Սա ի՞նչպէս յայտնեց իր գաղափարը: Ի՞նչ էր յաղթականին պատասխանը:

12.

Երբ Լեհաստանի վերջին թագաւորը կը տիրէր, ապրտամբու թիւն ծագեցաւ իրեն դէմ: Ապստամբներէն մին՝ լեհ իշխան մը՝ քսան հազար լիրա պարգեւ խոստացաւ թագաւորին գլխուն համար, եւ նոյն իսկ թագաւորին գրեց իր լռութեանը մասին՝ ղանիկա վախցնելու նպատակով:

Իսկ թագաւորը ամենայն հանդարտութեամբ գրեց անոր հետեւեալ կարճ պատասխանը. « Ստացայ ձեր նամակը եւ կարգացի զայն. ան բաւական հաճոյք պատճառեց ինձ, որ իմ գլուխս այդքան արժէք ունի ձեզ համար. սակայն կ'ապահովցնեմ զձեզ թէ ձերինն համար մնիմ մը անգամ չեմ տար »:

Հարցո՞ւմ. — Լեհաստանի ո՞ր թագաւորին դէմ ապրտամբու թիւն ծագեցաւ: Ո՞վ էր ապստամբներէն մէկը: Այդ իշխանը ո՞րքան պարգեւ խոստացաւ: Ի՞նչ բանի համար էր այդ պարգեւը: Այդ մասին թագաւորին ալ գրե՞ց: Ի՞նչ

նպատակով գրեց անոր: Թագաւորը յուզուեցաւ. վախցաւ: Ի՞նչ էր արքայական կարճ՝ բայց շանթահարիչ պատասխանը: Ամեն գլուխ նոյն արժէքը ունի:

13.

Մեծն Փրեդերիկոս ծանր պարտութիւն մը կրեց Գօլինի մէջ: Ժամանակ մը վերջ, զօրահանդէսի մը ատեն, հեգնորէն հարցուց զինուորի մը, որ խորունկ վէրք մը ստացած էր իր ծնօտին վրայ. «Բարեկամ, որ գարեջրատուն ստացար այդ ճանկուտօքը», Զինուորը պատասխանեց. «Ստացայ զայն Գօլինի մէջ, ուր Ձեր վեհափառութիւնը վճարեց ճաշացուցակին համար»:

Հարցաւ. — Մեծն Փրեդերիկոս փայլուն յաղթութիւն մը ունեցաւ Գօլինի մէջ: Ե՞րբ տեղի ունեցաւ զօրահանդէսը: Այդ ատեն թագաւորը ի՞նչ հարցուց զինուորի մը: Զինուորին վէրքը թիթեւ էր: Ո՞ր ստացած էր զայն: Պատերազմի դաշտին վրայ ստացուած վէրք մը ամօթ է թէ փառք:

14.

Ազնուական մը՝ Լորտ Նորթհի հետ միասին օթեակի մը մէջ նստած՝ չճանչնալով նորին լորտու թիւնը, խօսակցութեան բռնուեցաւ անոր հետ, եւ տեսնելով երկու տիկիններ որ դիմացի օթեակը մտան, դարձաւ անոր ու այսպէս խօսք ուղղեց (addressed). «Խնդրեմ, տէր, կրնա՞ք տեղեկացնել զիս թէ ո՞վ է այն տղեղ կինը, որ ճիշդ հիմա ներս եկաւ»:

«Օ՛, պատասխանեց նորին լորտութիւնը՝ խիստ զուարթօրէն, կրնամ, անիկա իմ ամուսինս է»:

Ազնուականը ամօթէն շիկնած թլուատելով պատասխանեց. «Տէր, բիւր ներում կը խնդրեմ ձեզմէ, ե՛... ս զա՛... ա... նիկա ըսել չե՛նեմ ուզեր. ես ը՛... ը՛... սել կ'ը՛... ու... զեմ այն ահռելի հրէշը, որ անոր հետ է»:

— Նորին լորտութիւնը յարեց ժպտելով. «Անիկա ալ իմ դուստրս է»:

Հարցաբան. — Ո՞վ նստած էր Լորտ Նորթհի Տետ: Ո՞ւր նստած էին: Ո՞րը միւսին Տետ խօսքի բռնուեցաւ: Խօսակցութեան միջոցին զորո՞նք տեսաւ ազնուականը: Ար ճանչնար զանոնք: Գեղանի՞ էին այն տիկիները: Որմէ՞ տեղեկութիւն խնդրեց: Ի՞նչպէս էր հարցման ոճը: Լորտը բարկացաւ: Ի՞նչ պատասխան տուաւ: Ազնուականը ամօթահար չեզաւ իր անխոհեմ հարցմանը համար: Իր սխալը դարմանելու համար ի՞նչպէս ինքզինքը չքմեղացնել ջանաց: Ո՞վ էր լրտուհու թով օրիորդը: Խոհեմական է անծանօթէ մը տեղեկութիւն խնդրել ուրիշ անծանօթի մը նկատմամբ:

15.

Վայրի աղանձի մը, որ առուակի մը եզերքը լաստենւոյ մը վրայ թառած էր, տեսաւ մեղու մը որ ջուրը ինկած՝ կը մաքառէր առուակին ալիքներուն դէմ, որոնք կ'սպառնային վարել տանիլ զինքը: «Սպասէ՛, խեղճուկ թռչնակ, ես քեզ նաւակ մը պիտի խրկեմ, որով կրնաս ազատիլ», գոչեց աղանձին: Նա կտուցովը տերեւ մը փրցուց եւ վար նետեց: Մեղուն ազատեցաւ անով եւ շնորհակալ եղաւ իր բարերարէն:

Շատ չանցաւ, եւ ահա որսորդ մը հասաւ հոն եւ հրացանը ուղղեց դէպ ի թռչունը: Երախտագէտ մեղուն տեսնելով վտանգը, որուն մէջ կը գտնուէր իր բարերարը, իսկոյն թռաւ եւ խայթեց որսորդին ձեռքը: Պնմամ — գնտակը վրիպեցաւ եւ աղանձին ազատեցաւ:

Հարցաբան. — Աղանձին ո՞ւր թառած էր: Հոնկէ ի՞նչ տեսաւ: Ի՞նչ բանի դէմ կը մաքառէր: Աղանձին ի՞նչպէս քաջալերեց մեղուն: Նա ի՞նչ փրցուց: Ո՞ւր նետեց տերեւը: Անով ազատեցաւ մեղուն: Շատ չանցած ո՞վ հասաւ հոն: Որսորդը ի՞նչով պիտի զարնէր թռչունը: Երբ մեղուն իր բարերարին մտալուստ վտանգը տեսաւ, ի՞նչ ըրաւ: Աղանձին զարնուեցաւ:

16.

Գիւղի մը մէջ դարբին մը մարդ մը սպաննած ըլլալուն՝ կախաղանի դատապարտուեցաւ: Տեղւոյն գլխաւոր գիւղացիները հաւաքուելով՝ խնդրեցին դատաւորէն որ դարբինը մահուան չդատապարտուի, քանզի նա տեղւոյն հարկաւոր էր եւ աւանց դարբնի կարելի չէր ձիեր լուանել, անիւներ նորոգել, եւայլն: Սակայն դատաւորը ըսաւ. « Ի՞նչ պէս ուրեմն կրնամ գործադրել արդարութիւնը »: Մշակ մը պատասխանեց. « Տէր, գիւղին մէջ երկու ոստայնանկ կայ. ասանկ փոքր տեղւոյ մը համար մէկը բաւական է, միւսը կախէ: »

Հարցում. — Ո՞վ մարդ մը սպաննած էր: Ի՞նչ բանի դատապարտուեցաւ դարբինը: Ի՞նչ ըրին գլխաւոր գիւղացիները: Ի՞նչ խնդրեցին դատաւորէն: Ի՞նչ առարկելով ասանկ խնդրեցին: Ի՞նչ ըսաւ դատաւորը: Ո՞վ պատասխանեց դատաւորին: Արդարութիւնը գործադրելու ի՞նչ ճամբայ ցոյց տուաւ մշակը:

17.

Կէորդ Ա. (տուջին)՝ Անկլիոյ թագաւորը՝ երբ անգամ մը կը ճամբորդէր դէպ ի Հանովը, Հոլանտայի մէջ գիւղակի մը պանդոկը իջաւ՝ ձիերը փոխել տալու համար: Նոյն միջոցին անթի ըլլալով՝ երեք հաւկիթ բերել տուաւ ու կերուաւ: Մեկնելու պահուն պայիկը գանգատեցաւ նորին ղեհափառութեան թէ պանդոկագետը երկու հարիւր ֆիօրին կը պահանջէր հաւկիթներուն փոխարէն: Ինքնակալը կանչել տուաւ զանիկա եւ ըսաւ. « Ի՞նչպէս կ'ըլլայ, պարոն, որ երեք հաւկիթի փոխարէն երկու հարիւր ֆիօրին կը պահանջես ինձմէ. արդեօք ատոնք այնքան հազուագիւտ են հոս: » « Ո՞չ, տէր արքայ, պատասխանեց սրամիտ պանդոկագետը, հաւկիթները բաւական առատ են եւ աժան, բայց թագաւորները չափազանց հազուագիւտ են հոս, եւ պէտք է օգուտ քաղենք անոնցմէ, երբ բաղդը պատուէ զմեզ անոնց ներկայութեամբ: Թագաւորը ժպտեցաւ եւ հրամայեց որ երկու հարիւր ֆիօրինը համրուի: »

Հարցարան. — Անկլիա ո՞ւր է: Ի՞նչ է մայրաքաղաքին անունը: Քանի՞ միլիոն բնակիչ ունի: Ո՞ր գետին վրայ կանգնուած է: Գէորգ Ա. գէպ ո՞ւր կը ճամբորդէր: Ո՞ւր կանգ առաւ: Ի՞նչ բերել տուաւ ու տելու համար: Պանդոկապետը քանի՞ ֆիօրին պահանջեց: Երբ հարցուեցաւ անոնց այնքան սղուծեան պատճառը, ի՞նչ պատասխանեց ան: Ի՞նչ հրամայեց թագաւորը:

18.

Օր մը սատանան մարդու մը առջեւ ելաւ իր ամենասուկալի կերպարանքովը, եւ ըսաւ. « Հիմա պիտի մեռնիս: Բայց կրնամ քեզ շնորհել քու կեանքդ, եթէ սա երեք պայմաններէն մին ընդունիս. կամ հայրդ պիտի սպաննես, կամ քորդ պիտ ծեծես, կամ գինի պիտի խմես: »

« Որը ընեմ, մտածեց մարդը: Անկարելի է որ մեռցնեմ հայրս. ինքն է որ ինձ կեանք պարգեւած է: Քոյրս չարչըրկէ ահուկելի լիան է: Ուրեմն գինի կը խմեմ: »

Եւ գինի խմեց: Սակայն գինովնալուն պէս՝ սպաննեց իր հայրը եւ չարչըրկեց իր քոյրը:

Հարցարան. — Ասիկա իրական պատմութիւն մըն է թէ աւանգու թիւն: Սատանան որուն առջեւ ելաւ: Կերպարանքը ի՞նչպէս էր: Ի՞նչ սպաննացաւ: Մարդուն կեանքը իրեն շնորհելու համար քանի՞ պայման առաջարկեց: Կրկնեցէք այդ պայմանները: Մարդը ի՞նչ մտածեց ատոնց մասին: Ո՞րը հաճելի եկաւ իրեն: Հետեւանքը ի՞նչ եղաւ:

19. Ուիեդուրը:

Հայ գրաբար լեզուի ամենէն ծաղկած ժամանակն է Ե. դարը, զոր Ուիեդուր կ'անուանէ պատմութիւնը: Այդ դարուն մէջ է որ գտնուեցան հայ գիրերը Սահակի եւ Մեսրոպի ձեռքով, եւ լոյս տեսան շատ մը հեղինակութիւններ ու թարգմանութիւններ, որոնց գլխաւորն է Աստուածաշունչը: Յաջորդ դարերուն մէջ աւելի փայլուն գրողներ ունեցած ենք արդարեւ, բայց ոչ որ կրցած է հաւասարիլ

այն լեզուին, զոր գրեցին առաջին թարգմանիչներէն Եզնիկ Կողբացի եւ Երկրորդ թարգմանիչներէն Եղիշէ:

20. Հայ Գլխեր:

Մեր այժմու գործածած տպագրական գիրերը թէպէտ Մեքսիկոյն ալբոմին կը կոչուին, սակայն Մեսրոպի ձեւակերպած բուն գիրերը չեն. տասնեւվեց դարէ ի վեր հետզհետէ կատարելագործուած են անոնք նոր ճաշակներու համաձայն: Մեսրոպեան գիրերուն սկզբնական ձեւը Երէւնիք կը կոչուի, որ մինչեւ իններորդ դար գործածուած է գրեթէ անփոփոխ: Իններորդ դարուն մէջ հնարուած է Գլխի Երէւնիք, նախորդ տառերը քիչ մը կարճեցնելով ու կարգի դնելով: Իսկ տասներկուերորդ դարուն մէջ, զանոնք ալ աւելի կարճեցնելով՝ կազմակերպեցին Բարբառիք, որ հետզհետէ բարւոքուելով՝ մեր այսօրուան գիրը եղաւ: Տասներկուերորդ դարուն մէջ աւելցած են Մեսրոպի գտած երեսունեւվեց տառերուն վրայ Օ եւ Ֆ գիրերը, որով այսօր երեսունեւութի կը հասնին անոնք:

21. Առաջին Աշխարհաբար Գիրքը:

Առաջին աշխարհաբար գիրքը տպուած է վենետիկի մէջ տասնեւեօթերորդ դարուն վերջերը, 1685—1687: Այս գիրքին անունն է Պարզաբանութիւն հոգեւորութեան Պարբերի, եւ հեղինակն է Յովհաննէս Հոլով, որ ասկէ զատ ունի նաեւ գրաբար հեղինակութիւններ: Նահապետ Ջուղայեցի անուն անձ մը տպագրել տուած է այս գիրքը իր ծաղքովը, աշխարհաբար լեզուն ծաւալելու բաղձանքով: Բայց այդ աշխարհաբարը ոչ Ջուղայի ժողովրդեան բարբառն է, ոչ ալ Պոլսինը, այլ Երկուքին խառնուրդը: Իսկ Միլիթար Արքայ գրած է առաջին քերականութիւնը, որուն համառօտութիւնը միայն հրատարակուած է:

Հասկնալ Կ. Տոնէլեան:

22. Սահ-ի Թուշ-ներ:

Գարնան առաջին օրէն սկսեալ՝ ամբողջ ամառը՝ արեւը մարը մտնելէն յետոյ՝ այդեստաններու հովանուտ հովտին մէջ տրտմագին ձայն մը կ'սկսի հնչել, Սահակ... Սահակ...:

Ոչ մէկը կրնայ ճշդել թէ ո՛ր կէտէ կուգայ այդ ձայնը: Ամբողջ հովտին մէջ ուր որ երթաս՝ ձայնը կայ ու կը հնչէ, բայց քանի՛ կը կարծես թէ կը մօտենաս ձայնին, այնքան ձայնը կը հեռանայ քեռէ, անդադար կրկնելով միեւնոյն մեղամաղձիկ ողբերգը, Սահակ... Սահակ... Սահակ...:

*

Ա՛րսեն թէ այդ ձայնը յաւիտենական ողբերգն է վիպական թռչունի մը, որ ժամանակաւ մարդկային էակ մըն էր:

Ատենօք մայր մը կար, գորովագութ մայր մը, որ միակ որդի մը ունէր, Սահակ անուն, խարտիշագեղ պատանի մը, որուն վրայ հօգի կուտար: Անքան լուռ սիրով կապուած էր անոր հետ: Ու մայր ու որդի իրարմով երջանիկ էին, շատ երջանիկ...:

Բայց, բարէ, այն ժամանակները սովորութիւն կար որ երբ կամուրջ մը կառուցուէր, ջուրերու ոգիները սիրաշահելու համար կը զոհէին այն առաջին անձը, որ նորաշէն կամուրջին վրայէն առաջին անգամ անցնէր: Երբ այս զոհը չըլլար, ջուրերը կը կատաղէին եւ իրենց ամեհի կոհակներովը շուտով կը փրցնէին կամուրջը:

Խարտիշագեղ Սահակ, որ այս անգութ սովորութիւնը չէր գիտեր, սեւ օր մը, գիտելու գնաց այն կամուրջը որ դեռ նոր շինուած, լմնցած էր, եւ զուարթ, միամիտ, անցաւ կամուրջին վրայէն...:

Աւա՛ղ, սովորութիւնը անողք էր, Սահակ դժբաղդ զոհը եղաւ այդ նորաշէն կամուրջին:

Մայրը՝ անգիտակ սոյն ահուելի դժբաղդութեան, կը սպասէր որ իր որդին գայ, ու չէր ալ գիտեր թէ ո՛ր գնացած է անի: Բայց ի զո՛ւր, խարտիշագեղ Սահակ ալ չվերա-

դարձաւ: Աւ մայրը խենդի պէս չորս կողմը ինկաւ փնտռելու իր սիրական զաւակը... բայց տեղ մըն ալ չգտաւ զանի:

*

Ո՞վ գիտէ որքան ժամանակ պտըտեցաւ այս տարաբաղդ մայրը լեռներու եւ անտառներու մէջ՝ փնտռելով ու ողբալով իր սիրականին կորուստը: Օրին մէկն ալ, չենք գիտեր ի՞նչպէս, թեւեր առաւ եւ սլացաւ օդին մէջ:

Աւ անկէ ի վեր գիշերուան մթութեան մէջ ինքզինքը ծածկած՝ կ'ողբայ իր սեւ ճակատագիրը եւ տակաւին կը փնտռէ իր սիրական զաւակը անդադար կանչելով տերագին, Սահակ... Սահակ... Սահակ...: Յովն. Գազանման:

23. Ընտանեկան Յարկը:

Ընտանեկան յարկը օթեւան մըն է նուիրական, որ իր մէջ կ'ամփոփէ ինչ որ սիրելագոյն է մարդկային սրտին: Ի՞նչ բան աւելի սիրելի քան հայր, մայր, եղբայր, քոյր, ամուսին, զաւակ, աւելի հեշտալի քան ասոնց սիրոյն փոխադարձ վայելըմը, եւ աւելի սրբազան քան այն յիշատակներ, որոնք ասոնցմէ կուգան: Ընտանեկան յարկը կը բովանդակէ եւ կը բացատրէ այդ ամեն անոյշ բաները: Բոյն մըն է այն սիրաջերմ մարդկային էակին համար իր ամեն հասակներուն մէջ. անոր մէջ կը վայելէ իննամբ, զոր ոչ ոք դուրսը կարող է տալ անոր, սէր անսահման, որուն հետ կարող չէ բազմադատուիլ այդ յարկին օտար էակի մը յաճախ կեղծուպատիր բարեկամութիւնը:

Հոն կը հանգչի մարդ, հոն կ'սփոփուի: Հաճոյքները, զորս կը վայելէ մարդ անոր մէջ, անհամեմատ քաղցրութիւն մը ունին, եւ անբիծ անարատ են, մինչդեռ արտաքին զուարճութիւններ յաճախ պղտոր են եւ կը ձգեն իրենց ետեւ տխուր յիշատակներ: Ռ. Յ. Պերպերիան:

24. Աշուն Լեռները:

Տեսայ սոխակով լեռները Մայիսի մէջ. լեռներ դեռ կանաչ էին, թարմ եւ պայծառ:

Տեսայ լեռները, սաստիկ տաքերուն. զով էին եւ կանաչութիւնը թանձր գունով մը պատած էր ամեն կողմ:

Տեսայ լեռները Աշնան մէջ: Այդ տիրող կանաչութիւնը տեղ տեղ կարմրած էր պղնձագոյն: Բնութիւնը իր սքանչելիքը կը պարզէր այս փոփոխութեամբ:

Անտառներու մէջ տերեւներ գալարուած ինկած էին գետին. խըշխըշացող, կակուղ յատակ մը կը կազմէին ատոնք. եւ ծառերէն շատեր իրենց պղնձի կարմիրով բուսական կանաչութիւնը գունաւորած են. գալարուած ինկած այդ տերեւներն ալ պղնձացած են:

Ճարտար վըձիններ պիտի դիտէին, պիտի ուսումնասիրէին շարունակ, աչքերը շացնող նկարներ ընդօրինակելու եւ յօրինելու համար: — Արուեստին հրաշալի նախանձն է այդ:

Չիու վրայ երբ կ'անցնէի անտառի ճամբաներէն, այդ վիթխարի եւ ճարտարարուեստ հովանաւորութեան մէջ, կը հիանայի սքանչելագործ մատին վրայ:

Ինչ գեղեցիկ են անտառները: Ծառերը ճամբու կրկին եզերքներուն վրայ գէմդիմաց խնդուն՝ զիրար գրկած կը համբուրեն. յաղթական կամարներ կը ձեւացնեն ատոնք, որոնց տակէն ժամերով կ'անցնիս ուռած կուրծքով. ամեն կողմ գեղեցկութիւն, գեղարուեստ, ոտքիդ տակն ալ այդպէս: — Խոնջանքս այն ատեն միայն կը հանգչէր:

Հանդիպեցայ այնպիսի ոստերու, որոնց վրայ ծառերու հիւսուած պսակները, գիծերն ու աղեղները՝ ամեն ձեւով ու մեծութեամբ, սքանչելիք էին:

Եւ ասոնք խոկմունք եւ սքանչացում միայն տուին ինձ:
 Բարգէն Ծ. Վ. Կիւրէակիւնս:

25. ԵՐԻՔ ԵՐԻՔ:

Ինչո՞ւ համար այնչափ տխուր ու տագոյն ես, Փէրտինանդ: Անշուշտ գէշ լուրեր ինձ կը բերես:

— Տէր, ալ չեմ կրնար նաւաստիքը բռնել. թէ որ ծովեզերքը չերեւնայ, ամեն բան լմնցած է. վասն զի ամենքը մէկ բերան քու արիւնդ կ'ուզեն:

Դեռ խօսքը բերանն էր, եւ ահա կատաղի ամբօխը
հասաւ :

Անոնց աղաղակը՝ խաղաղ նաւահանգստին մէջ թա-
փուող խռովայոյղ ալիքներուն ձայնին կը նմանէր: Մատնիչ,
դաւաճան, կը գոչէին, ո՛ւր են մեզ ըրած խոստումներդ:
Ազատէ՛ զմեզ անօթութենէ, եւ թէ որ չունիս, արիւնդ տօ՛ւր
որ խմենք:

Վսեմախոհ Գոլոմպոս անոնց կատաղութեանը դիւցազ-
նական քաղցրութեամբ մը պատասխան տուաւ:

— Թէ որ արիւնոյս կրնաք երջանիք ըլլալ, ձերն է
առէք. բայց թողէք, կ'աղաչեմ, որ արեւուն իր նուիրական
ճառագայթներովը արեւելքը ոսկեզօծելը մէկ մըն ալ տես-
նեմ: Եթէ վաղը ազատարար օփունք մը չերեւնայ, այն
ատեն ես ձեզմէ մահս պիտի խնդրեմ. բայց մինչեւ այն
ատեն նոյն ճամբուն հետեւեցէք եւ վստահ եղիք Աս-
տուծոյ:

Գիւցազին հանդարտ ու անխռով կերպարանքովը նորէն
կը հանդարտին:

— Տէր, ըսածիդ պէս ըլլայ, կը կանչեն միաբերան,
բայց թէ որ արեգակը առանց մեզի փրկութիւն ցուցնելու
եղէ, անոր լոյսը վերջին անգամ տեսած պիտի ըլլաս:

Եւ արեգակը հորիզոնէն վար կ'իջնէր, վերջալոյսը
գիշերուան տեղիք կուտար, եւ նաւապետին կուրծքը ճըն-
շուած՝ չէր կրնար հանգիստ շունչ առնել:

Նաւուն ողնափայտը լայնածաւալ ծովը կը պատուէր
կ'անցներ, աստղերը մէկիկ մէկիկ կ'երեւնային. բայց, աւաղ,
յուսոյ աստղը բնաւ չէր երեւնար, երկիրն ու փրկութիւնը
շատ հեռու էին: Տխուր գիշերը անբուն կ'անցներ Գոլոմպոս,
հեռագիտակը ձեռքը եւ աչքերը անդադար արեւմուտք
դարձուցած:

— Դէպ ի արեւմուտք, դէպ ի արեւմուտք թո՛իր, ո՛վ
նաւդ իմ հաւատարիմ: Գուն ես իղձերուս եւ ակնկալու-
թեանցս նպատակը. օրհասական մտացմունքս ու սիրտս կ'ող-
ջունեն զքեզ:

Բայց ի՞նչ ոտնաձայն է:

— Փերտինանդ, ինչո՞ւ աւելի տխուր ու գեղնած ես, ի՞նչ լուր կը բերես:

— Տէր, բանք լճացած է, ահա արեւը նուիրական ճառագայթներովը դրօշնիս լուսաւորեց:

— Հանգարտ կեցիր, այս ճառագայթները Աստուծոյ ձեռքէն ելած են, որ մէկ բեւեռէն միւսը կը հսկէ, եւ որոնք որ իրենց յոյսը անոր վրայ դրած են՝ գիտէ անոնց առջեւ վերջին ճամբան բանալ: Մնաս բարով, բարեկամ, անդին ալ կը տեսնուինք:

Թուրերու շկահունը օդը կը թնդացնէր, շլթաներ մեծաշառաչ կը պատրաստուէին. Գոլումպոս անխուով զինքը երկինքի ճամբորդութեան կը պատրաստէր, եւ ահա յանկարծ չորս կողմէն այս ցնծալից ձայնը լսելի եղաւ:

— Երկիր, երկիր:

Չոր ոչ ոք կրցեր էր գուշակել, եւ Գոլումպոս հանձարը համարձակեր էր յուսալու, նորածագ արեւուն ճառագայթներովը լուսաւորուած կ'երեւնար, եւ նաւաստիքը այն մեծ մարդուն ոտքը ինկած՝ իրենց շնորհակալութեան պաղատախառն ձայները ամենակարող Աստուծոյ կը բարձրացնէին:

Հառաքսաձույ Ա. — Գուսթաւսմանս:

26. Աշոյի վերջույ՝ Բ:

Գալկահար եւ մելամաղձիկ աղջկան մը տխուր՝ այլ թովիչ գեղեցկութեանը կը նմանի աշնան սա վերջալուսային տեսարանը, զոր հիացման բուռն հրայրքով լեցուած կը դիտեմ հիմա. կը դիտեմ ճիշդ հոն՝ ուր արեւը մարը մըտնելու մօտ՝ սկսած է այլ եւս քիչ քիչ ժողովունելու իր ցանցնած ոսկի ցուքերը. եւ հոն՝ այդ անսահման կապոյտին վրայ, ամպերու շերտերը՝ նոյն ցուքերէն հրդեհուած այնքան գեղեցիկ, այնքան դիւթական...:

Եւ սարսուռներ սուր քամի մը կ'անցնի ծառերու վրայէն ու կ'իյնան անոնց տերեւները, որոնք չոր են եւ գունատ. մինչ վերջալոյսը կ'արձկէ իր յետին անզօր ցուքերը այդ

տերիւածափ ծառերուն մէջէն, դաշտերուն վըայ դակուն
ու անծաղէկ . . . :

Ու ես յառած աչերս հոն՝ ուր հետզհետէ դողդոջուն
վերջալոյսը կը մարի մայրամուտքի խրոխտ լեռներու ետին՝
ալ ժողվըանելով իր ցանցնած ոսկի ցուքերը. կը նայիմ, կը
նայիմ շարունակ՝ սիրտս անցեալին տրտմալի միանգամայն
քաղցր յիշատակներովը առլի . . . :

Եւ այդ վերյիշումներով պարտակուած՝ կը խորհիմ
պահ մը ոնցնող սրտան եւ անցուցած օրերուս վըայ, որոնք
ճիշդ այս պահուն կեանքիս քսանեւեօթը անդարձ տարի-
ները կազմած են, ու կ'ըսեմ. « Ի՛նչ է կեանք, եթէ ո՛չ
իրագործուած յոյսերով եւ յուսախարութիւններով խառն
Տէ՛ծ երազ մը, որ կուգայ ու կ'անցնի . . . »

Պօղոս Գ. Միսնակուն:

27. Ըդիկն երբէ՛

(Թովմաս Հուտ):

Մատներն յոգնած ու մաշած, կոպերը ծանրացած
կարմրած, կին մը ցնցոտիներով ծածկուած, որուն խեղճու-
թեան դէմ հակապատկեր մըն էր իր դէմքը, նստած էր՝
յար շարժելով ասեղն ու դերձանը. կարելով կարելով,
միշտ կարելով, թշուառութեան, անթութեան եւ անա-
պարանքի մէջ, եւ իր տիրահանչիւն ձայնովը կ'երգէր շա-
պիկին երգը:

Կարել, կարել, կարել. մինչ պաղաղը կը խօսի տանի-
քին վերեւ. կարել, կարել, տակաւին կարել մինչեւ որ
աստղերը փայլին առաստաղին մէջէն. — Ո՛հ, գերութիւն
է այս գերութիւն, միթէ քրիստոնէի՞ աշխատանք է այս:

Աշխատէ, աշխատէ, աշխատէ, մինչեւ որ խեղք դառ-
նայ: Աշխատէ, աշխատէ, աշխատէ, մինչեւ որ աչքերդ
պղտորին ու գոցուին: Թեզանիքը կարէ, օձիքը, աստառը
կարէ. մինչեւ որ կոճակներուն հասնելուդ՝ քունէդ վար
իյնաս ու երազիդ մէջ ալ շարունակես կարել:

« Ո՛վ մարդիկ, որք սիրեցեալ քոյրեր ունիք, ո՛վ մար-
դիկ, որ մայրեր ու կիներ ունիք, կտաւ չէ՞ զոր կը հագնիք,

այլ մադկային արարածներու կեանք է. — կարէ, կարէ, միշտ կարէ, խեղճութեան, անօթութեան եւ աճապարանքի մէջ. կրկնակ թելերով կը կարես պատանքդ ինչպէս եւ շապիկ մը:

“Բայց ինչո՞ւ մահուան խօսքը կ'ընեմ, վտիտ, սոսկալի կամխքին խօսքը. անոր ահարկու դէմքէն չեմ վախնար ես. նա այնքան ինձ կը նմանի, ես այնքան կը նմանիմ անոր՝ ծոմապահութեան երկար օրերէ ետքը: Ո՛վ Աստուած, կարե՛ք ման է որ հացն այսքան սուղ ըլլայ, եւ կար կարող աղջկան միսն ու արիւնը այնքան աժան ըլլան:

“Կարե՛լ, կարե՛լ, կարե՛լ. իմ աշխատութիւնս երբէք չթեթեւնար: Եւ ի՞նչ է անոր վարձքը, յարդէ անկողին մը, չոր հաց մը եւ ցնցոտիներ, սա ճեղքած առաստաղը, այս ցուրտ տախտակամածը, կոտրած աթու մը, եւ այնքան մերկ պատ մը. շնորհակալ եմ ստուերիս, երբե՛մն այն պատին վըրայ տարածուելուն համար:

“Կարե՛լ, կարե՛լ, կարե՛լ, Գեկտեմբերի միգապատ օրուան մէջ. եւ կարե՛լ, կարե՛լ, միշտ կարե՛լ, երբ օդը պայծառ է եւ տաքուկ. երբ երգիքին եզերքը ծիծեռնակները կը կանչեն իրենց բոյնը շինելու, ինձ ցուցնելով արեւէն ոսկեզօծուած փետուրնին, եւ գարունէն ալ զօհուիրս յիշեցնելով:

“Ո՛հ, իցի՛ւ թէ կարենայի շնչել զեփիւռին ու գարնանածաղիկին անո՛ւշ շունչը, կարենայի արեւը զգալ գլխուս վերեւ, ու խոտը ոտքիս տակ. կարճ ժամ մը միայն, մէկ ժամ կարենայի զգալ ինչ որ զգացի կարօտութեան տառապանքները ճանչնալ սկսելէ առաջ, երբ մէկ շրջագայութեան համար դեռ ճաշէ մը չէի զրկուեր:

“Ո՛հ, կարճ ժամ մը միայն, մէկ ժամ կարենայի շունչ առնել, կարճ շունչ մը, ո՛չ թէ երջանկաւէտ արձակուրդ մը՝ սիրելու կամ յուսալու համար, այլ միայն հանգստեան ժամ մը վշտակրութեան համար, լալու համար քիչ մը, որով սիրտս կը թեթեւնար. բայց կոպերուս տակ պէտք է որ դառն արցունքներս չորնան. զի մէն մի արտօսը կրնայ կասեցնել ասեղս եւ դերձանս:”

Թարգմաննց Ռիզաւան Բեճեւան:

28. Գի-ղէ եկեղեցիքն է- Ան-ր քահանայ:

Մեր գիւղի եկեղեցին հողակերտ ու փայտաշէն է, որ մի քանի տարի առաջ հազիւ հաղ նորոգուեցաւ. տնս, սեղան պարզ, անպաճոյճ, փայտակերտ, կոպիտ շինուած մի խաչկալ ունի, վէմ-քար ու մոմակալ աստիճաններ անշուք միջոտած կտաւով ծածկուած են. պատարագի ժամանակ հազիւ թէ երկու մոմ կը վառուին, ուրիշ ժամանակ բաւական է մի փայտէ ճրագակալ եւ վրան հողէ ճրագ բողբոջին ձիթոտած ու միջոտած, սեղանի տերուական պատկերը տես ինչ անձեւ եւ անարուեստ է: Իկեղեցւոյ յատակը եւ սեղանի վրայ միայն փսիաթներ փռուած են: Գիւղական եկեղեցիներ մեծ մասամբ վերնատուն չունին, այլ մարդիկ առաջ կը կանգնին, կիներ ետեւի կողմ:

Թողունք այս նիւթական անշքութիւնը, որ Աստուծոյ տիեզերական փառքին առաջ նշանակութիւն չունի, որուն աթոռ երկինք է եւ ոտքին պատուանդան՝ երկիր: Գանք բարոյական մասի նկարագիր հանել: Մի ծերունի քահանայ ունինք, ցուպը ձեռքը դողդոջելով հազիւ եկեղեցի կուգայ. աչքեր Իսահակ Նահապետի պէս վատատես եղած են ի վաղուց, բայց ինքն եկեղեցւոյ ժամերգութեան շատ բաներ գոց ըրած է եւ կը կարդայ. ինքն երկիւղած, բարի եւ ժողովորդասէր քահանայ մըն է:

70. 4.

29. Գի-ղացի է- Օյը:

(Առակ:)

Գիւղացի մը, որ արտեր ու ջաղացքներ ունէր եւ գիւղացւոց մէջ բաղդաւոր ու հարուստ մէկն էր, իր յաջողութեան բաղդը կը պարտէր այն սեւ օձին, որ ասոր տան մէջ կը բնակէր: Մէկ հատիկ զաւակ մը կ'ունենայ այս գիւղացին, եւ որովհետեւ օձը սովոր էր տան մէջ համարձակ շրջելու, երախան օր մը օձին հետ խաղալով՝ անոր պոչը իր ափին մէջ սաստիկ կը ճզմէ. որքան կը ջանայ օձը՝ կարող չըլլար իր պոչը ազատելու տղուն ձեռքէն: Ճարը հատած կը խայթէ տղուն թաթիկը. տղան կը թողու պոչը, ու կը

Թունաւորուի միանգամայն. օձը իր խայթածին ու Թունաւորածին հետեւանքը գիտնալով՝ կը փախչի տան մէկ անկիւնը կը կծկի. Ժամեր կ'անցնին, եւ տղան վերջապէս կը մեռնի:

Յղուն հայրը սաստիկ կակիծէն ուրազը կը վերցնէ օձին կը զարնէ, օձին պոչը կը կտրի եւ օձը իր գլուխն ու մնացեալ մարմինը առած կը փախչի տունէն ու գիւղէն դուրս քարերու մէջ կ'ապրի: Օրեր կ'անցնին, բայց հետզհետէ այդ գիւղացւոյն բաղդը կ'աւրուի: Օր մը իր կնոջը հետ կը մտածեն. «Երթանք մեր օձը նորէն մեր տունը հրաւիրենք բերենք, որպէս զի մեր բաղդը վերադառնայ:», եւ կ'երթան քարերու մէջ կը կանչեն իրենց օձը. ան պատասխան կուտայ. «Ինչպէս ձեզ՝ նոյնպէս ինձ. փափաքելի է այդ, բայց ա՛լ անկարելի է. քանի որ դուք ձեր զաւկին մահը յիշէք եւ ես ալ իմ պոչը, իրարու հետ չենք կրնար հաշտ ապրիլ:»

Գ. Եպիսկ. Սրտաւնձոնեանց:

B. Poetry.

1. Նապաստակ:

Ա՛յ նապաստակ իմ սիրուն,
 Շուտ վերջ տուր այդ խաղերուն:
 Ո՛հ, չես տեսներ դու միթէ,
 Որսորդը քեզ կը դիտէ:
 Փախի՛ր, փախի՛ր, սիրելիս,
 Որ չըլլայ թէ զարնուիս:

Նապաստակը խորոտիկ
 Աչքերն դարձուց բոլորտիք.
 Եւ ականջներն իր բարակ
 Տնկեց, փախաւ շատ արագ.
 Որսորդն ուղղեց իր հրացան —
 Պճովմով — գնդակ, վառօդ փճացան:

Միխիթայր Պոնտուցի:

2. Աստուծոյ Աղօթք:

Փառք քեզ, Յիսուս իմ մարդասէր,
 Որ պահեցիր զիս այս գիշեր.
 Տուիր անոյշ երազ ու քուն
 Մինչեւ հասան ժամերն այգուն:
 Պահէ նաեւ այսօր ու միշտ
 Ծնողքս ու զիս անփորձ անվիշտ.
 Տո՛ւր որ ըլլամ անմեղ ամբիժ
 Եւ արժանի սիրոյն Երկնից.
 Արդիւնաւէտ եւ անգին
 Ըլլան օրերն իմ կեանքին: Ամէն:

3. Երեկոյեան Աղօթք:

Անցան ցորեկուան ժամեր լուսավառ,
 Բամեր հաւքերու մտան իրենց թառ.
 Մինչ կ'ուզեմ ես ալ մտնել անկողին,
 Ի քուն փակել իմ խոնջ ահանողին,
 Նուիրեմ քեզի, Աստուած կաթոգին,
 Իւթիւնս համակ, իմ սիրտն ու հոգին: Ամէն:

4. Սեղանի Աղօթք:

Փառք քեզ, ո՛վ Տէր,
 Որ մեր սեղան
 Քու բարիքներ
 Միշտ կը տեղան:

Շնորհէ նաեւ	Տո՛ւր աղքատին
Հոգւոյդ սնունդ	Առօրեայ հաց
Որ յարատեւ	Որ փարատին
Օրհնենք անունդ:	Ամպեր վշտաց:

Ո՛հ, ապրինք յար
 Փառքիդ համար: Ամէն:

5. Կ-ի-ն -- Մե-ի-ը:

Փունջի մը մէջ, ուր ծաղիկներ շատ կային,
 Կակաչն օր մը քոյն էր ինկեր մեխակին.
 Քիչ ատենէն անոր բուրումն էր առեր.
 Օգտակար է իշտ --նեւ-ը Լ-- ընկեր:

Զատիկ Կ. Տօնէչեան:

6. Եր-ժ-ը--նէն:

Երբ կը զարնես դու մանտօլին
 Ու ես յուզուած ունկընդրեմ՝,
 Կ'ըսեմ՝ երբն է պըլպուլին
 Որ գեղգեղէ այգուն դէմ:

Երբոր զարնես մանտօլին
 Ի՞նչ շեշտեր զերդ մարգարիտ
 Մատիկներուդ տակ ծըլին,
 Հասիկ հասիկ ու վըճիտ:

Երբ կը զարնես մանտօլին
 Ա՛յնքան անոյշ մեղմօրօր,
 Վիշտ ու ցաւեր կը հալին
 Մոմիկին պէս Տիրամօր:

Բայց երբ զարնես մանտօլին՝
 Վսեմապէս կորովի,
 Կարծես շանթեր թաւալին,
 Անըզգան ալ խրոովի:

Երբ նուագես մանտօլին՝
 Խոնարհիմ քու առջեւ ես,
 Զի սեւ աչքերըդ փայլին
 Ներընչուած քրմուհւոյն պէս:

Քու ձեռքիդ մէջ մանտօլին
 Որփէօսի հոգին է.
 Հրեշտակներն ալ կ'զմայլին
 Նախանձին քեզ, Աթինէ:

Երբոր զարնես մանտօղին,
 Յետոյ յոգնած մըրափես,
 Այդ տեսքն է էն սըխրալին . . .
 Կ'ապշինք որ դեռ մանուկ ես:

(Մասիս)

Մ. Աճախնա՛:

7. ԾՊՈՒՆ:

(Հին առակ:)

“ Կաղնի մ'եմ ես յաղթ ու վըսեմ,
 Բարձր, հաստարմատ եւ հուժկու,
 Գըլուխս հասնի ամպերու սեմ,
 Ծաղըէ կայծակն ահարկու: ”

“ Իմ թանձր ու թաւ ոստոց մէջէն
 — Անյաղթ մազեր Սամիսոնի, —
 Վայրագ հովեր ի զո՛ւր փըչեն,
 Յորոց աշխարհ սասանի: ”

“ Արեւ, անձրեւ, ձիւն ու կարկուտ,
 Տարերց զայրոյթն, ոխ ու քէն,
 Չեն խորտակեր ոյժս անկապուտ,
 Ես չեմ վախնար երկինքէն . . .: ”

“ Ճիւղերուս մէջ պատըսպարին
 Թռչնոց բոյներ բազմաթիւ,
 Որոնց զուարթ երգ ու պարին
 Ականջ զընեմ ցայգ ու տիւ: ”

“ Շուքիս ներքեւ հովիւք յամեն,
 Մոռնան վիշտ, ցաւ, ամեն բան,
 Մինչ փառքս երգեն սարեակք ամեն
 Եւ սոխակներ օրհնաբան: ”

“ Ոտքերուս տակ բոյսեր բոլոր,
 Թըրզուկ, գաճաճ են չնչին,
 Որք ուշ կամ վաղ, ոլոր մոլոր,
 Կոտրին, փըշրին, կորընչին: ”

“ Ես անսասան եւ պերճ կոթող,
Ապրիմ, տեւեմ ծառ հրակայ,
Ձիս տապալող կամ ինձ յաղթող
Աշխարհիս մէջ ոչինչ կայ: ”

— Մայր ընութիւնն արդար կիրքով
Անոնց դէմ որ յոխորտան,
Հրպարտ ծառին արմատին քով
Ո՛րդ վը դըրաւ անպիտան:

Աղնքս. Գ. Փամոսնան:

8. վարդին փռւլը:

Ինչո՞ւ հայրիկ,	— Ոչ վարդ միայն
Կ'ըսէր Յարիկ,	Այլ ամեն բան
Վարդը քընքուշ	Է երկնից տակ
Ունի սուր փուշ:	Փըշոտ, որդեակ:

Երկինքն հոն վեր
Բուսած վարդեր
Չունին բիծ, փուշ,
Են միշտ քընքուշ:

Հ. Այսեւն Ղազիկնան:

9. Խաղողը:

Տերեւներուն մեջէն բարակ,
Որք սընդուտի կը նմանին,
Կուռ ողկոյցներ սեւ ու ճերմակ
Վար կը կախեն հատիկներնին:

Ոմանք երկայն, ոմանք կըլոր,
Մանրիկ, փայլուն եւ լուսանցիկ,
Տերեւներուն վըրայ խոշոր՝
Կը կարծըւին բանուած ծաղիկ:

Արցո՞ւնք են թէ շաղի կաթիլ,
Ամպին ցանցէն ցօղուած չիթ չիթ,
Ջըմրո՞ւնխտ արգեօք, վարդ նորածիլ,
Կամ աստղերէ՛ն ինկած ժրպիտ:

Անոնք արցունք չեն, ոչ գոհար,
 Ոչ ալ ծաղիկ, ոչ ալ կիտուած.
 Անուշ խաղող են զովարար,
 Միրգ, զոր միայն օրհնեց Աստուած :

Ջայն շինեցին լոյս հրեշտակներ
 Նուրբ մատներովն իրենց ճարտար,
 Այգիներուն աշնան նուէր,
 Սիրուն տղաք, ձեզի համար :

Ջալպէլ Կ. Տօճէլեան :

10. Յողոյ թաւուն :

(Աւանդավէպ) :

Չըքնաղ առտու մը գարնան
 Յօղոս, կիսալոյս,
 Աղուոր աղջիկ մ'աննըման,
 Հարսնցու մի կոյս :

Լոգարանին մէջ մինակ,
 Անփոյթ պչրանքով,
 Կը լուացուի ու ճերմակ
 Շուշան մ'է տեսքով :

Մազերն սփիւռ ոսկեզօծ՝
 Կը սանդրէ անի,
 Ու կը սարսուան լանջքը հոծ
 Եւ պորսն հոլանի :

Ու վարսերը կը ցրուին,
 Վիժակ՝ սունպան՝
 Ծրփալով շուրջն իր մարմնին,
 — Խորան մաքրութեան :

Այլ բաղնիքին կիսաբաց
 Դռնէն՝ աղջրկան
 Եղբօր աչքն է հանդիպած՝
 Քրորջ մերկութեան . . . :

Օ՛հ, ի՛նչ ամօթ, Աստուած իմ,
 Փրկէ՛, փրկէ՛ զինք.
 «Թռչուն մ'ըլլամ ու թռչիմ'
 Երկինքէ երկինք, . . .»

Եւ աղուորը սարսուազին
 Յանկարծ կ'առնէ թեւ,
 Մոռցած սանտրը դեռ գլխին՝
 Մագերուն վերեւ:

*

Յոպոպ թռչունն է այսօր
 Սիրուն աղբիկն այն,
 Բըբուկն ալ՝ սանտրը անոր,
 Ըստ աւանդութեան:

Արտուշէս Յայրաթիւնեան:

II. Լ-ԷԼԵ:

(Հ. Հայնէ:)

Է՞ր, չը գիտեմ, տխուր եմ այսքան,
 Անյայտ է ինձ վշտիս պատճառ.
 Ջըրոյց մը հին վաղընջական
 Միտքս է ինկեր, չերթար՝ յամառ:

Ձով է օդը, ու կը մթնէ,
 Եւ Հօնոս հոսի անխուով,
 Լեռան կատար բոցագոյն է
 Արփուցն վերջին նըշոյներով:

Հըրաշագեղ ու աննրման
 Աղբիկ մը հոն վերն է նստել.
 Ջարդերն ոսկի կը շողշողան,
 Կը սանտրէ մազն իր ոսկեթեւ:

Կը սանտրէ զայն սանտրով ոսկի,
 Ու մի եւ նոյն ատեն կ'երգէ.
 Կը խըռովի երգէն հոգի,
 Ա'նքան մոգիչ կ'եղանակէ:

Իր կուրին մէջ նաւավարը
 Վառի տենչով մը մոլեգրին.
 Ա՛լ չի տեսներ խուժն ու ժայռը,
 Միայն ի վեր աչքերն հային:

Ալիք՝ կարծեմ թէ հուսկ ապա
 Կուլ կուտան նաւն ու նաւավար,
 Ու Լոռէլայն է որ կ'ըլլայ
 Իրեն հրգողն անոր պատճառ:

Ռ. Յ. Պէրպէրնում:

12. Ի՛՛՛՛ Մահը:

Եթէ տրժգոյն մահու հրեշտակ
 Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ...
 Շոգիանան ցաւքս ու հոգիս,
 Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Եթէ սընարըս՝ իմ տիպար
 Մոմ մը վըտիտ ու մահագէմ,
 Ո՛հ, նըշուլէ ցուրտ ճառագայթք,
 Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Եթէ ճակտովս արտօսրազօծ
 Զիս պատանի մէջ ցուրտ զերդ վէմ
 Փաթթեն, դընեն սեւ դագաղը,
 Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Եթէ հնչէ տխուր կոչնակ
 Թըթռուն ծիծաղն մահու դըժխեմ,
 Դագաղս առնէ իր յամրօ քայլ,
 Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Եթէ մարդիկն այն մահերգակ՝
 Որք սեւ ունին եւ խոժոռ դէմ՝
 Համասըփոեն խունկ ու աղօթք,
 Գիտցէք որ դեռ կենդանի եմ:

Թէ յարդարեն իմ հողակոյտ,
 Եւ հեծեծմամբ ու սրգալէն
 Իմ սիրելիքը բաժնուիս,
 Գիտցէք որ միշտ կենդանի եմ:
 Իսկ աննըշան եթէ մընայ
 Երկրի մէկ խորշն հողակոյտն իմ,
 Եւ յիշատակս ալ թառամի,
 Ա՛հ, այն ատեն ես կը մեռնիմ:

Գ. Դոռոնեան:

13. Տղան-գէր:

Աշնան չորցած թուփերու հետ
 Հովիկն այն ալ քըշեց տարաւ,
 Վաղաթարշամ ծաղիկն անհետ,
 Դեռ չը բուրած իսպառ կորաւ:
 Սեւ գերեզման մը փորեցին,
 Լացող չեղաւ անոր վըրան.
 Սիրոյ համար ծընած հոգին
 Անսէր իջաւ ի գերեզման:

Կորիւն Մկրտչեան:

14. Չի-նը:

Ակնախըտիղ անբըծութիւն մը վերէն
 Երկնից վըճիտ բարձրութենէն կ'իջնէր վար,
 Վարանելով, օրօրուելով, ծուլօրէն,
 Քալուածքին պէս կնոջ մարմնեղ եւ ըստուար:
 Ու փողոցին մայթին վըրայ կը փրօէր
 Ճերմակութիւնն իրեն քնքուշ՝ ցեխին քով.
 Ոտքերու տակ կը կոխկըռտուէր, կը լըռէր,
 Անտրտունջ միշտ ու քիչ մըն ալ հաճոյքով:
 Վերէն հիմա ձիւնը առատ կը մաղուէր,
 Յօժարակամ թողլով եթերը կապոյտ.
 Անձնամատոյց կ'ինն էր ան որ կը թաղուէր
 Փոսի մը մէջ ցեխի, անհոգ ու անփոյթ:

Գ. Զօհրայ:

15. ԼԵՐՆԻԵՐ:

Առտըւան մեղմ սիւքին տակ,
Մեղմ՝ համբոյրին պէս կոյսի,
Կը դողդըղան մեկուսի
Լուրթ լեւակներն ու ճերմակ:

Մեղմ՝ համբոյրին պէս կոյսի,
Առի անոնց բոյրն յըստակ.
Լուրթ լեւակներն ու ճերմակ
Տարփոտ լանջեր են՝ ըսի:

Առի անոնց բոյրն յըստակ,
Ինչպէս հեւք մը նոր հարսի.
Տարփոտ լանջեր են՝ ըսի,
Յուքերն այգուն, լոյծ լեւակ:

Ինչպէս հեւք մը նոր հարսի՝
Լեւակն հեշտանք մըն է տաք.
Յուքերն այգուն, լոյծ լեւակ,
Պզտիկ ծովեր են վարսի:

Վահան Մարգրեան:

16. Բանալի:

Դասարանի ժամերէս վերջ սրբընթաց,
Երբ կը դառնամ տուն՝ մըտքով խոնջ ու ցընդած,
Հազիւ էմքին կ'անցունեմ դրան Բանալի,
Յուստ աստղիկներ յանկարծ առջիս կը փայլին,
Հրեշտակիկներ անթեւ՝ Լուսին ու Նշարէր,
— Մին՝ շահոգրամ բուրեղ, քնքուշ՝ միւսը վարդ —
« Հայրիկս եկաւ, Մայրիկ » — յանկերգը կրկին
Իրենց երգին — կ'ընէ իմ տունըս՝ երկին . . .
Եւ կը մոռնամ խոնջանք, հոգ, վիշտ, ամէն ինչ,
Մինչեւ աչքերըս ծանրանան քաղցր ի նինջ . . . »

Զոգուած կեանքի խուլ ժըխորէն անախորժ,
 Կ'առանձնանամ խըցիկիս մէջ՝ — լըռիկ խորշ — .
 Պզտիկ քանի՜ մը դառնալով կամացուկ՝
 Ինձ կը բանայ գրադարանիս փեղկեր զոյգ :
 Ա՛հ, հոգեցունց, նըւիրական այգ պահուն՝
 Խորհուրդներու խորին՝ անծիր ու անհուն
 Ի՛նչ աշխարհներ — հոփայնացոյց Աբրահիմ —
 Կը թաւալին՝ անթարթ աչացըս առջին . . . :
 Եւ կը սկըսիմ ես ալ դառնալ անոնց հետ,
 Մինչեւ անձուկ մոլորի միտքս անհետ . . . :

Անցեալն՝ որ դառն՝ ոմանց, այլոց՝ անուշ էր —
 Սիրաս ու հոգիս չարչըրկող սրբան յուշեր
 Արդեօք թողած է գանկիս տակ, ո՞վ գիտէ . . .
 Կրնամ զանոնք մոռնալ վայրկեան մը միթէ . . . :
 Դեբիան . . . ցընկում մ'ըստուերներու որ խուսին —
 Կրկնապատկէ իղձերս — վիշտերս խօլ ու սին — .
 Բայց երբ ուղղեմ անզօր նայուածքս հեռուն՝
 Անպարագիր հորիզոնին սեւեռուն՝
 Ո՛վ՝ կեանք, երազ իրար գրկած կը հային,
 Ո՞վ տայ պիտ' ինձ սպառնի քանալի . . . :

Ա. Կ. Կիւրպեակիան:

17. Սիրունի:

Գիշերն աստղեր ու լուսնակ,
 Ցերեկն ալ ցոլքն արեւուն
 Կը ցոլացնէ շարունակ
 Երկնից կապոյտն անհուն,
 Թափանցիկ:

Թռչող ամպերն սպիտակ,
 Ծառեր, թռչունք ու մարդիկ
 Կը ցոլացնէ լուրթ — լըճակ
 Իր արեաց մէջ հանդարտիկ
 Թափանցիկ:

Պատկերները շքեղ անթիւ,
 — Երկնից, ծովուն, ցամաքին —
 Կը ցոլացնէ ցայգ ու տիւ
 Պատուհանին ապակին

Թափանցիչ:

Բայց, ի՞նչ անմեղ սիրտ մ'անվիշտ,
 Հոգի՛ մ'անբիծ, անարատ,
 Կը ցոլացնեն, Մռնի՛քի, միշտ
 Ժպտող աստղերըդ ջուխտակ

Թափանցիչ:

Ա. Կ. Կիւրպեանկեան:

18. Յոբանայի օրհանգստի:

Երկնքի չափ ի՞նչ կայ խոր,
 Ի՞նչ օդի նման կենսողոր,
 Հզօր ի՞նչ կայ քան զսէր,
 Ծովու պէս ի՞նչ մշտերեր.
 Երկիրի զոյգ հաստատուն,
 Ի՞նչ արեւի պէս հրարուն
 Կրօնքի նման սուրբ ու խոր,
 Քան զլուսին ի՞նչ աղուոր.
 Իղձի պէս ի՞նչ կայ հարուստ
 Ի՞նչ գոյութեան զոյգ անուստ.
 Այս ամենուն մէջ, ո՛հ, ի՞նչ
 Հաստէին ցոլքին պէս կայ ջինջ:

Յ. Գ. Մ.:

19. Պարտիզանի Մահը:

Մի՛ լար, հայր իմ ու մայրիկ,
 Կոյս, մի՛ լար, թէ երթամ
 Հեռու երկիր պանդխտիկ,
 Այլ շուտով ետ դառնամ.
 Ո՛հ, մէկ աւանդ սիրական
 Տուր ինձ, մայր, քու համբոյր:
 Առաւ համբոյրն ու գնաց.

Այլ ի տար աշխարհին
 Թուաւ արեւն իր կենաց
 Ի ծաղիկ հասակին.
 Լացէք, հայր իմ ու մայրիկ,
 Լաց, ձ կոյս, զի երթամ
 Հեռու երկիր պանդխտիկ
 Մեռանիմ ես անժամ:

Մ. Պեշիկթաշչեան:

20. Խ-Բ-Ն-Ն-Ն-Ն Սէր:

Առտու մը ձմրան
 Տեսայ զայն մինակ,
 Չեռքը թաշկինակ,
 Նստած բլրին վլրան:

“ Ի՞նչ ունիս, աղջիկ.
 Տրտում, մրտածկոտ,
 Ի՞նչ կը փնտուես հող,
 Բու կուլաս մեջիկ: ”

Աչքն արցունքներով
 Կը նայէր հեռուն,
 Սեւ սեւ ամպերուն
 Բու ծովուն խրոով:

“ — Անփորձ, հրապուրած
 Առաջին օրէն,
 Հաւտացի իրեն,
 Խաբեց զիս, գընաց . . . : ”

Կ. Ոսկեան:

21. Ա՛-ՎԷՐԻՐԵ՛Ր:

Գարունները միշտ հիններն են
 Վարդածիծաղ ու բոցանոյշ,
 Ամպեր կապոյտ, աչքեր մեղոյշ,
 Գինովութիւն մը կը բուրեն:

Ալեակներ նոր են յաւիտեան,
 Վաղն արշալոյսն է նոր դարուն,
 Վիշտեր սրտէն փախչին հեռուն,
 Բու խառնրւին հին մթութեան:

Երազանքի քաղցր են օրեր,
 Լուսով, բոյրով շաղուած յաւէտ,
 Կեանքի ուղին միշտ արփաւէտ՝
 Ծաղիկներու մէջն է պահուեր:

Գէտը պղտոր չէ ալ հիմակ,
Վճիտ ջուրով կը ծաւալի,
Լուսընկային ղերգ հայելի,
Լճակին պէս անդորր համակ:

Հառաչ չունի իր երգին հետ,
Ժայռերը ցաւ չեն տար իրեն,
Վ'անցնի անձայն ափունքներէն,
Ովկիանին մէջ կըլլայ անհետ:

*

Հոգին սակայն չուզեր հաւտալ,
Ամեն բան կեղծ կուգայ կարծես,
Մութին մարող ասուպին պէս
Վ'ուզէ ինք ալ մութին երթալ:

Կը վերածնին միշտ գարուններ,
Թուշունները կուգան նորէն,
Տես արծիւներն ալ ամպերէն
Կը սըլանան աւելի վեր:

Վ'որոնեմ զո՛ւր ու սրտաբեկ,
Չեզ չի տուի գերեզմանին,
Շուրջըս համայնք վերածաղկին,
Մտերմութիւն, հաւատք, ո՛ւր էք:

Ռ. Որբերեան:

22. Կ--Կ--:

Այ, թռչնակ սիրուն, թռչնակ աննրման,
Դո՛ւ հաւատարիմ կարպետ գարնան.
Կանաչ ու անթառամ է միշտ քու պուրակ,
Քու երկնակամար՝ ջինջ ու կապուտակ.
Վըշտով չեն թրթուար քնարիդ թելեր,
Իւ քու տարուան մէջ կը պակսի ձրմեռ:

Իցէ կրնայի, ո՛հ, ազատաթեւ
 Սաւառնիլ քեզ հետ, թռչիլ յարատեւ,
 Եւ ամեն տարի ընել մի շքրջան՝
 Գարնան լինելու ընկեր անբաժան: Շ. Վ.

23. ԹՆՆՆՆՆՆ:

Մինչդեռ ոյժ ունիս դու ամենայն օր
 Ապրուստի համար քրտինք թափելու,
 Ամաչքր, ո՛վ մարդ, կարկառած ձեռքով՝
 Աղքատի նման՝ չոր հաց մուրալու:
 Իսկ երբոր շունիս բնաւ ոչ մի յոյս
 Քու ոյժի վրայ — առանց տատանման
 Հայրենի երկիրդ օրհնելով՝ պառկիր
 Եւ լուռ անմուռնչ մտքի գերեզման:

Թարգմ. Ռ. Անուիեան:

IV. Vocabulary.

A. Armenian-English.

(Բարձրագույն Հայերէն-Անգլերէն ։)

— Indicates the repetition of the same word. Words in parentheses serve to complete the sense of those words that precede or follow them.

Ա.

- ագարակ farm.
ագի tail.
ագառ free; — արար deliverer, liberator; — ել to save.
ազգ nation; — ական relative.
ազնուական nobleman.
աթոռ chair.
աժան cheap.
այ too, also.
անչ . . . no more.
ալիք wave.
ախոռ stable.
ախորժակ appetite.
ախորժիլ to like.
ածել to lay; to play (on piano etc.).
ածելի razor.
ածիլել to shave.
ականջ ear.
ականկալել to expect.
ականկալութիւն expectation, hope.
ակումբ club.
ականայ tooth.
ահարկու terrible.
ահա(ւասիկ) here is, here are.
ահռելի shocking, horrible.
աղ salt.
աղալ to grind.
աղաղակել to cry.
աղաղել to entreat, to supplicate.
աղաւնի pigeon.
աղեղ bow.
աղերս supplication; — արկու supplicating.
աղմուկ noise.
աղջիկ girl.
աղտոտ dirty.
աղցան salad.
աղքատ poor.
աղտոտ dim.
աղբորէպան miller.
աղբորիք mill.
ածապարանք haste.
ածիլ to grow.
ամայի desert.
ամառ summer.
ամբոխ crowd, multitude.
ամբողջ whole.
ամեհի fierce, furious, raging.
ամեն every, all.
Ամենակարող Almighty.
ամիս month.
ամուլ barren.
ամուսին spouse.
ամուսնանալ to marry.
ամուր firm, strong.
ամուրի bachelor.
ամչնալ to be ashamed.
ամպ cloud.
ամփոփել to comprise, to comprehend.
ամօթ shame; — ահար confused, abashed.
այբուբեն alphabet.

- պրգեկութ vintage.
 պրգի vineyard.
 պլանդակ queer.
 պիծ goat; — եամ՝ buck; — եմեիկ doe.
 պյուր to-day.
 պյոս cheek.
 պյր husband.
 պյցելել to visit.
 անապատ desert, wilderness.
 անասուն animal.
 անարգել to despise.
 անգամ՝ even; times; — մը՝ once.
 անգութ merciless.
 անգիտակ unawares, unconscious.
 անդադար incessantly, ever.
 անզոր feeble, weak.
 անընդհատ constantly.
 անիծել to curse.
 անիրաւ wrong; — ել to do wrong, to do an injustice.
 անիւ wheel.
 անխաճեմ imprudent.
 անխռով calm.
 անծանօթ unknown, stranger.
 անկողին bed.
 անկանոն irregular.
 անկատար imperfect.
 անկարելի impossible.
 անկեղծ sincere.
 անկիւն corner.
 անհամեմատ incomparable.
 անձ person; — նական personal; — նաւորութիւն personage.
 անմահ immortal.
 անմեղ innocent.
 անշուշտ assuredly, certainly.
 անողորմ՝ relentless.
 անոյշ sweet.
 անուանել to name, to call.
 անուն noun, name.
 անպաճոյճ plain, unadorned.
 անսահման immense.
 անտառ forest, woods.
 անցաւոր transient, fleeting.
 անցեալ past, last.
 անցնիլ to pass.
 անօթի hungry.
 անօթութիւն hunger.
 աշակերտ pupil, disciple.
 աշխատանք labour.
 աշխարհ world: — արար modern (Armenian).
 աշուն autumn.
 աչք eye.
 ապահովել to assure.
 ապառնի future.
 ապերախտ ungrateful.
 ապերջանիկ unhappy.
 ապշել to be astonished.
 ապուշ stupid, silly.
 ապուր soup.
 ապսպրել to order.
 ապստամբ rebel; — ութիւն revolt, rebellion.
 ապրանք goods, wares.
 Ապրիլ April; to live.
 աջ right (hand).
 առած proverb.
 առանց without.
 առաջ before, ago; — ին՝ first; — ը the former.
 առաջարկութիւն offer, proposal.
 առաստաղ roof, ceiling.
 առատ abundant.
 առարկել to object.
 առաւօտ morning.
 առաքինի virtuous.
 առաքինութիւն virtue.
 առիւծ lion.
 առնել to take.
 առուակ brook.
 առջեւ before; — ելել to meet.
 առտու morn.
 ասեղ needle.
 ասղաման needlecase.
 աստի cloth.
 ասպետ knight.
 աստառ lining.
 աստղ star.
 Աստուած God; — աշունչ Bible.
 ատել to hate.
 ատեն time; — զբ once, formerly.
 արագիլ stork.
 արարած creature.
 արգիլել to forbid, to prevent.
 արդար just; — եւ indeed; ութիւն justice.
 արեգակ sun.
 արեւ sun; — ելք east; — մուտք west.
 արթնցնել to wake.

արժանի worthy; — *ըլլալ* to deserve.

արժեք to cost.

արժէք worth, price.

արի valiant, brave.

արիւն blood.

արծաթ silver.

արձակուրդ holiday.

արմատ root.

արմաւ date; — *ենի* date-tree.

արմտիք corn, production.

արջ bear.

արուեստ art; — *ազէտ* artist.

արտ field.

արտոյտ lark.

արտօսը, *արցունք* tear.

արքունիք court.

աւազ sand.

աւազակ robber.

աւանակ donkey.

աւանդութիւն tradition.

աւարտել to conclude.

աւել broom.

աւելնալ to be added.

աւլել to sweep.

ափ palm of the hand.

ափն, *ափունք* shore, coast.

աքաղաղ cock.

աքացել to kick.

Բ.

բազմոց sofa, seat.

բազկաթոռ arm-chair.

բազուկ arm.

բաժակ glass, cup.

բաժնել to divide.

բակ yard.

բաղդ fortune, fate.

բաղդատել to compare.

բաղխել to knock.

բաղձանք wish, desire.

բաղնիք bath.

բայ verb.

բան thing; *ամեն* — *լնցած է* all hope is lost.

բանալ to open; — *ի* key.

բանաստեղծ poet.

բանուած enamelled.

բանտ prison; — *արկել* to imprison.

բաշխել to distribute.

բառ word; — *արան* dictionary.

բարակ thin, slender, subtle.

բարբառ dialect, tongue.

բարեբաղդ fortunate.

բարեկամ friend.

բարեձեւ handsome.

բարերար benefactor.

բարեւ compliment, salutation.

բարի good.

բարկանալ to be angry.

բարձր high; — *աջառակ* tall.

բարոյական moral.

բարութիւն goodness.

բարւոյքել to improve, to perfect.

բարօրութիւն welfare.

բաց open; *կիսա* — ajar.

բացառութիւն exception.

բացատրութիւն explanation.

բաւական enough, sufficient.

բրուկ crest.

բեռ burden, load; — *նակիր* porter.

բերան mouth; *ձկ* — with one voice, unanimously.

բերել to bring.

բելեռ pole.

բթամիտ dull.

բիւր ten thousand.

բլուր hill.

բնակիլ to dwell, to live.

բնակիչ inhabitant.

բնաւորութիւն disposition.

բնին farthing, mite.

բոյն nest.

բոյս herb, plant.

բովանդակել to contain, to comprise.

բութ blunt.

բուն original, proper.

բուռն violent, intense.

բուսական vegetable.

բուսնիլ to sprout, to grow.

բուրդ wool.

բուրում fragrance.

բռնել to hold, to seize.

բրդեայ woollen.

բրեմ to dig, to hoe.

բրինձ rice.

բրուտ potter.

Գ.

գագաթ top; — նակէտ Zenith.
գալ to come.
գալարուած wriggled.
գահ throne.
գաղափար opinion, idea.
գաճաճ dwarf.
գամ nail; — **եւ** to drive (a nail).
գայլ wolf.
գանգատել to complain.
գանձ treasure; — **ապետ** treasurer.
գառազեղ menagery, cage.
գառնուկ lamb.
գարեջուր beer.
գարեջրատուն alehouse.
գարուն spring.
գաւաղան stick, sceptre.
գաւաթ cup.
գեղանի fine, handsome, beautiful.
գեղարուեստք fine arts.
գեղեցիկ beautiful.
գետ river; — **ակ** stream; — **ափ** bank.
գետին ground, earth.
գերի slave.
գերութիւն slavery.
գէշ bad.
գէր fat.
գիծ line.
գին price.
գինեմել drunkard.
գինի wine.
գինով drunk; — **նալ** to get —.
գիշեր night; — **բարի** good —.
գիտնալ to know.
գիտութիւն science, learning.
գիր letter, character.
գիրնալ to become fat.
գիրք book.
գիւղ village; — **ացի** peasant.
գլխարկ fez, hat.
գլխաւոր chief, principal.
գլուխ head; chapter.
գծագրել to draw.
գնել to buy, to purchase.
գնտակ bullet.
գոգնոց apron.
գոհ contented; — **ունակութիւն** contentment.
գոհար jewel.

գող thief; — **նալ** to steal; — **օն** theft.
գոմ stable.
գոյն colour.
գոչել to exclaim, to cry.
գոռալ to roar.
գովել to praise.
գովեստ praise, eulogy.
գործ work, affair, deed, business; — **ազրել** to fulfil, to execute; — **ածութիւն** use; — **աւոր** workman.
գորշ gray.
գորովագուծ affectionate.
գոյ shut; — **եւ** to shut; — **ընել** to learn by heart.
գուլպայ stocking.
գումարուել to assemble, to convene.
գունատ pale, tarnished.
գունաւորել to dye, to colour.
գուշակել to predict, to foresee.
գտակ cap.
գտնել to find, to discover.
գրաբար literal; **հայ** — ancient Armenian.
գրասեղան desk.
գրատետր writing-book.
գրել to write.
գրիչ pen.
գրկել to embrace.
գրող writer.
գրչակալ pen-holder.
գրպան pocket.
գրքոյկ or **գրքուկ** manual.

Դ.

գագաղ coffin, bier.
գագրել to cease.
գալիսահար icteric.
գահեկան piaster.
գանակ knife,
գաշակ piano.
գաշակցութիւն confederation.
գաշտ field, plain.
գառն bitter.
գառնալ to turn.
գառ lesson; class; — **ընկեր** class-mate; — **տնարակութիւն** education.

դատ բանալ to enter an action;
— ապարտել to condemn; — ա-
ւոր judge.

դար century, age.
դարբին blacksmith.
դարման remedy.

դաւանան fraudulent, imposter,
traitor; — ութիւն treason.

դգալ spoon.
դեղ medicine.
դեղին yellow.
դեղձանիկ canary-bird.
դեղնած pale.

դեռ still, yet; — խօսքը բերանն
էր he had scarcely spoken.

դեսպան ambassador; — ախոր-
հումր conference.

դերանուն pronoun.
դերասան actor.

դերձակ tailor.
դերձան thread, string.
դեւ devil.

դէմ against; — դիմաց opposite.
դէմք face, visage, countenance.

դժբաղդ unfortunate; — ութիւն
misfortune.

դժուար difficult.
դի or դիակ corpse.

դիտարան observatory.
դիտաւորութիւն intention.

դիտել to observe, to look.
դիւցազն hero.

դղեակ castle, fortress.
դնել to put, to place.

դողաճար trembling.
դողդոջուն tottering, trembling.

դուռ door, gate.
դուստր daughter.

դուքս duke.
դպիր scribe.

դպչել to touch.
դպրատուն school-house.

դպրոց school; — ական scholar;
— ակեց school-fellow.

դրախտ paradise.
դրամ money.

դրացի neighbour.
դրոշ flag, banner.

Ե .

եղ ox.
եղակի singular.
եղբրե bank, coast.
եթէ if; — ոչ else.
ելակ strawberry.
ելլել to get up, to rise.
եկեղեցի church.
եղանակ season; mood; air.
եղբայր brother.
եղբորաղջեկ niece.
եղբորորդի nephew.
եղէր reed.
երազ dream, vision.
երախայ babe, child.
երախտագէտ grateful.
երգ song, hymn; — ել to sing;
— էլ singer; — ոչ singing.
երդէք dormer window.
երեւնալ to appear.
երէկ yesterday.
երէջ elder, older.
երթալ to go.
երինջ heifer.
երիտասարդ young man.
երկաթ iron; — ագիր capital
(letter).

երկայն long.
երկ(ասիրութիւն) work; toil.
երկինք heaven.
երկիր earth, land, country.
երկիւղ fear; — ասծ pious.
երկնակամար sky.
երկու two; — քն ալ both.
երկչտո timid.
երկրաշարժ earthquake.
երշեկ sausage.
երջանիկ happy.
երջանկութիւն happiness.
եփել to cook, to bake.

Ձ .

զամբիկ mare.
զայրոյթ anger, wrath.
զանգակ bell; — ատուն belfry.
զարմանալ to be surprised.
զարնել to strike, to shoot.
զաւակ child.
զբաղում occupation, profession,
business.

զրօսանք amusement.
զրօսեցուցիչ amusing, enter-
 taining.

զգալ to feel.
զգայազիրկ insensible.
զգեստ dress.
զերդ like, the same as.
զերծել to put out of.
զինուոր soldier.
զմայլիլ to be charmed.
զմեղի penknife.
զմրուխտ emerald.
զոհ sacrifice.
զոյգ pair.
զով cool; — **արար** refreshing.
զուարթ blithesome, gay.
զուարձանալ to amuse (oneself).
զրկել to deprive, to bereave.
զօրահանդէս review.
զօրավար general.
զօրաւոր strong.

Լ.

էակ being.
էապէս essentially.
էգ female.
էշ ass.
էջ page.
էրիկ husband.

Ը.

ընդհուպ soon.
ընդմիջել to break off, to inter-
 rupt.
ընդունելու թիւն participle; re-
 ception.
ընդունիլ to receive, to accept.
ընդօրինակել to copy, to trans-
 cribe.
ընել to do.
ընթացք course.
ընթրիլ to sup.
ընթրիք supper.
ընծայ present, gift.
ընկեր companion, mate; — **ական**
 social.
ընկղմիլ to be drowned.
ըսել to say; — **ուզել** to mean.

Թ.

Թագ crown; — **աւոր** king; —
ուհի queen.
Թաթ hand; paw.
Թամբ saddle.
Թանկ(ազիւն) precious, dear.
Թանձր dense, thick; dark.
Թաշկինակ handkerchief.
Թառամիլ to fade.
Թառիլ to perch.
Թատերախաղ drama.
Թատրոն theatre.
Թարգմանել to translate.
Թարգմանութիւն translation.
Թարմ fresh.
Թաւ thick, bushy.
Թաւալել to roll, to revolve.
Թափել to pour, to empty.
Թափիլ to flow (into).
Թեզանիք sleeve.
Թեթեւ light.
Թել cord, thread.
Թելադրել to suggest.
Թերութիւն fault, defect.
Թիգնի fig-tree.
Թիղակ pigmy, dwarf.
Թէյ tea.
Թի shovel; — **ակ** oar.
Թիթեռնիկ butterfly.
Թիկնաթոռ arm-chair.
Թիւ number.
Թլուտտել to stammer.
Թղթապանակ pocket-book.
Թնդանօթ cannon.
Թնդացնել to resound.
Թշնամի enemy.
Թշուառ wretched, miserable.
Թոժիւն cub.
Թողուլ to leave.
Թոյն poison, venom.
Թովիլ fascinating.
Թուարանութիւն arithmetic.
Թուական date.
Թուել to number.
Թուզ fig.
Թութ mulberry.
Թուի brown.
Թուղթ paper.
Թունաւորել to poison.
Թուր sword.
Թռչիլ to fly.

Թռչուն bird.
Թքաման spittoon.

ժ.

ժամ hour; — **անակ** time; —
ագործ watchmaker; — **ացոյց**
watch; — **անակաւ** once.
ժամանակին in time.
ժամանել to arrive.
ժանդոտ rusty.
ժայաւէն ribbon.
ժառանգ heir; — **ել** to inherit.
ժողով meeting; — **ուրդ** people,
multitude.
ժպիտ smile.
ժպտիլ to smile.
ժրպան diligent.

Ի.

իդձ wish, desire.
իմաստութիւն wisdom.
իմաստուն wise.
իյնալ to fall.
ինչք property.
ինքնակալ monarch.
իշապան ass-driver.
իշխան prince.
իջնել to descend, to get down.
իսկոյն instantly.
իրեկուն evening.
իրզք indeed.
իցիւ oh that!
իւղ oil.
իւրաքանչիւր each, every.

Լ.

լալ to weep, to cry.
լակոնական laconic.
լայն broad; — **ածաւալ** vast,
spacious.
լաստենի alder.
լեզու language, tongue.
լեռ mount, — ain.
լիճ lake.
լիովին quite, fully.
լիցնել to finish.
լոգարան bathing-place
լողալ to swim.
լոյս light; **ի** — **լինծայել** to publish.

լուալ to wash.
լուացարարուհի washer-woman.
լուսանցիկ transparent.
լուսին moon.
լուսնել to shoe.
լուր news; — **զրկել** to send word.
լուցկի match.
լուութիւն silence.
լսել to hear.
լրագիր newspaper.
լրբութիւն insolence.

Խ.

խարել to deceive.
խածնել to bite.
խաղալ to play; — **իք** toy, play-
thing.
խաղաղ calm, tranquil; — **ութիւն**
peace.
խաղաղ grapes.
խայթել to sting.
խանութ shop.
խաչ cross; — **կալ** desk for a
crucifix.
խառն mixed; — **ուրդ** mixture.
խարազան whip.
խարխափել to grope along.
խարտիշագեղ fair-complexioned.
խաւար darkness.
խափանել to hinder, to stop.
խելացի clever, intelligent.
խելք brain, wit.
խեղճ poor, miserable.
խենդ fool, silly.
խիտտ very; hard, harsh, sharp.
խղճմտօրէն conscientiously.
խմել to drink.
խնամք care.
խնդալ to laugh; to rejoice.
խնդուն cheerful, merry, gay.
խնդրանք demand, request.
խնդրել to ask, to beg.
խնդրեմ pray.
խնձոր apple; — **ենի** — tree.
խշխշիւն rustling (of the leaves).
խոզ pig; — **կաղին** acorn.
խոկում reflexion, meditation.
խոհանոց kitchen.
խոհարար cook.
խոհեմ prudent.
խոյ ram.

Խոնարհ humble.
 Խոնարհում conjugation.
 Խոնաւ damp, humid.
 Խոնջանք fatigue, weariness.
 Խոշոր big, stout.
 Խոստանալ to promise.
 Խոստովանել to confess, to own to.
 Խոստում promise.
 Խոտ grass.
 Խոր, — ունկ deep.
 Խորան altar, pavilion.
 Խորդալ to snore.
 Խորհել to think.
 Խորշիլ to shun, to avoid.
 Խորտիկ pretty.
 Խորտակել to crush, to dash to pieces.
 Խանուած crowded.
 Խռովայոյզ tumultuous, turbulent, agitated.
 Խռովել to be troubled.
 Խրատ advice; — էլ to advice.
 Խրկել to send.
 Խրոխա imperious, proud.
 Խօսակցութիւն conversation.
 Խօսիլ to speak, to talk; (աքաղաղք) — to crow.
 Խօսք word, speech; — ի բռնուիլ to enter into conversation; — ուղղել to address.

ժ.

Ժագիլ to rise; to break out.
 Ժախել to sell.
 Ժաղիկ flower.
 Ժաղկատի young.
 Ժաղկիլ to flower, to bloom; to flourish.
 Ժաղկոց flower-garden.
 Ժաղրել to mock.
 Ժախք or Ժաղք expense.
 Ժանր heavy, severe.
 Ժանօթ acquaintance; friend.
 Ժառ tree.
 Ժարաւ thirst; thirsty.
 Ժաւայել to expand, to spread.
 Ժեծել to beat.
 Ժեր old; — ունի old man.
 Ժիծաղելի ridiculous, funny.
 Ժիծենակ swallow.
 Ժնանիլ to beget, to bear (a child).

Ժնծղայ cymbal.
 Ժնողք parents.
 Ժնրադրել to kneel.
 Ժնոս jaw, cheek, chin.
 Ժոմ (ապահուածիւն) fast.
 Ժոյլ lazy, idle.
 Ժով sea; — ափ or — ելք sea-coast, shore.
 Ժուլութիւն laziness.
 Ժուխ smoke.
 Ժաիլ to bend.
 Ժրար parcel, packet.
 Ժփալ to undulate, to fluctuate.

Կ.

Կազմ construction; binding (of books; — ակերպել to form, construct, to fashion; — էլ to form; to bind.
 Կաթ milk.
 Կաթիլ drop.
 Կարուած estate.
 Կախաղան gibbet.
 Կախել to hang.
 Կակալ tulip.
 Կակուղ soft.
 Կահաւորել to furnish (a house).
 Կահարատի furniture.
 Կաղ lame.
 Կաղամար inkstand.
 Կաղնի oak.
 Կամար vault, arch.
 Կամացուկ slowly.
 Կամուրջ bridge.
 Կամք will.
 Կայան station.
 Կայծակ lightning, thunderbolt.
 Կայմ mast.
 Կայսր emperor; — ութիւն empire.
 Կանաչ green.
 Կանգ առնել to stop, to halt.
 Կանգնել to erect, to raise.
 Կանթեղ lamp.
 Կանոն rule.
 Կանուխ early.
 Կանչել to call.
 Կապար lead.
 Կապոյտ blue.
 Կառապան coachman.
 Կառավարել to govern.

- կառուցանել to build.
 կատաղի raging, mad, enraged.
 կատարեալ perfect.
 կատարելագործել to improve, to perfect.
 կատղած mad.
 կատու cat.
 կարագ butter.
 կարգ class, order; — ի գնել to arrange.
 կարգալ to read.
 կարել to sew, to stitch, to seam.
 կարենալ to be able.
 կարծել to think, to presume.
 կարկուտ hail.
 կարճ short, brief; — եղնել to shorten.
 կարմիր red.
 կարմրալանջ redbreast.
 կարմրել to redden.
 կարող able, capable.
 կարօտ needy, indigent; — ու-
 թիւն want, poverty.
 կային axe.
 կեանք life.
 կեղծաւոր hypocrite.
 կեղծուպատիր illusiv, false.
 կենալ to stay.
 կենդանագիր portrait.
 կենդանի animal, beast.
 կեռաս cherry.
 կեսուր mother-in-law.
 կերպարանք appearance, face.
 կէս half; — գիշեր midnight; —
 օր noon.
 կթել to milk.
 կին woman, wife.
 կիսարայ այար.
 կիտուած enamel; dotting.
 կիրք passion.
 կլիմա climate.
 կլոր round.
 կծկել to couch.
 կղզի island.
 կմախք skeleton.
 կնիկ woman, wife.
 կշտանալ to be filled., to be sat-
 isfied.
 կոթ handle.
 կոթող obelisk.
 կոհակ billow, wave.
 կողմ side, part.
- կողոպտել to rob.
 կոճակ button.
 կոմս count.
